# ԷՋՄԻԱԾԻՆ



ՌՆԺ

ԺԸ ՏԱՐԻ

Յունուար

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ա

1961

ПА-1021

ԱԿԱԴԵՄԻԱ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տեր և տիկին Սուրեն և Շաքե Գալենտերյանների բարերարությամբ Էջմիածնի Սուրբ Շողակաթ եկեղեցու վերանորոգության առթիվ . . . . . 3

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանին ար-քության պատիվ շնորհելու մասին . . . . . 5

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը պրոֆեսոր Սիրարփի Տեր Ներսիսյանին Սուրբ Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշան շնորհելու մասին . . . . . 7

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Ամանոր և Սուրբ Ծնունդ . . . . . 9

Ամանորի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և պետական պաշտոնական անձնավորությունների միջև փոխանակված ողջույնի հեռագրերը . . . . . 12

Փրկչի հրաշափառ և Ս. Ծննդյան տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները . . . . . 14

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և եվրոպական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները . . . . . 19

Հայրապետական հանդիսավոր պատարագ և քարոզ Մայր Տաճարում Քրիստոսի հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոնի առթիվ . . . . . 21

Ամանորի հանդես Հոգևոր Ճեմարանում . . . . . 24

Քաղվածքներ Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերի արձանագրություններից . . . . . 27

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ . . . . . 29

Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասնամյակին նվիրված հանդիսություն Հոգևոր Ճեմարանում . . . . . 31

Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյան . . . . . 35

Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու վերանորոգությունը . . . . . 37

Սարկավագների ձեռնադրություն և Սուրբ Ստեփանոսի տոնը Մայր Աթոռում . . . . . 40

ԱԼ. ՍԱՀԻՆՅԱՆ— Էջմիածնի Մայր Տաճարի ճարտարապետական կերպարը . . . . . 43

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS.

Երևան, 1961 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՍՈՒՐԵՆ ԵՎ ՇԱՔԵ ԳԱԼԵՆՏԵՐՅԱՆՆԵՐԻ
ԲԱՐԵՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՍՈՒՐԲ ՇՈՂԱԿԱԹ
ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

**ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ**

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈ՜ՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻ՜ՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Ամենակալին Աստուծո ողորմությամբ, վերանորոգվեցավ Հայրենի հողին վրա մեր պատմական սուրբ վանքերեն մեկը ևս՝ Ս. Շողակաթ եկեղեցին, որ մեր մյուս հնադարյան վանքերու կողքին, կհանդիսանա քարահյուս գոհար մը՝ հայկական ճարտարապետական իր կառույցով:

Հոկտեմբերի 15-ին, շաբաթ օր, օծեցինք և օրհնեցինք վերանորոգված Ս. Շողակաթ եկեղեցվո Ս. Սեղանը, և հաջորդ օրը, հոկտեմբերի 16-ին, կիրակի, հայրապետական սուրբ պատարագ մատուցինք հավատացյալներու բազմության և բարեպաշտ բարերարներ, հալեպաբնակ տեր և տիկին Սուրեն և Շաքե Գալենտերյաններու ներկայության:

Ս. Շողակաթ եկեղեցին Վաղարշապատի մեջ երբեմնի արքունական ննջարանն էր, որտեղ բնակություն հաստատած էին Ս. Հռիփսիմյան կույսերը, սպասելով Տիրոջ այցելության:

Հայ հավատքի Հայր և մեր ժողովուրդի հոգևոր լուսավորության «լուսաւոր վերակացու» Ս. Գրիգոր Պարթև Հայրապետի օրով, ինչպես կվկայե Ագաթանգեղոս, «ի ննջանն, ի մէջ այգւոյն, ուր էին վանք նոցա, շինեցին, կազմեցին զտեղիսն և զարդարեցին ոսկի արծաթ կանթեղօք լուցելովք, և լապտերօք վառելովք և աշտանակօք բորբոքելովք»:

Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի համաձայն, «ի տեղւոջ հեղման արեանն կուսանաց, շինեցին երիս վկայարանս, մին ի հիւսիսոյ յարեւելից կողմանէ քաղաքին, ուր վկայեաց սանականն Հռիփսիմէ երեսուն և երկու ընկերօք, և զմիւսն շինեցին ի հարաւակողմն կուսէ անտի, ուր վկայեացն Գայիանէ, նորուն սնուցիչն երկու ընկերօք. և ԶՄԻՒՍՆ ԵՒՍ. ՄՕՏ Ի ՀՆՁԱՆՆ, Ի ՄԷՋ ԱՅԳՒՈՅՆ»:

Այսպիսով, Ս. Շողակաթ եկեղեցիին գոյությունը կը բարձրանա մինչև Դ դար, Ս. Գրիգոր Լուսավորիչ և Տրդատ աշխարհաշեն թագավորի ժամանակները:

Ավելի ուշ, աղոթքի այս տունը կոչվեցավ նաև ՇՈՂԱԿԱԹ. «Քանզի ի նմա շող աստուածեղէն ի Հօրէ լուսոյ ծագեաց», կամ ՄԱՐԻԱՆԵԻ ՎԱՆՔ, անունով Ս. Հռիփսիմե կույսի խումբին նահատակ Մարիանեի, որուն սուրբ նշխարներուն վրա բարձրացած է Ս. Շողակաթ եկեղեցին: Այսօր ալ, եկեղեցիին հարավային կողմը, կգտնվի նահատակ կույսի վեմ-տապանը, ուխտի սրբավայր մը մեր հավատացյալներուն համար:

Ս. Շողակաթ եկեղեցին ալ դարերու ընթացքին ենթարկված է շարք մը ավերածություններու, Արարատյան դաշտին մեջ գտնվող մեր հոգևոր-իմացական այլ մեծ կեդրոններուն հետ, և ի վերջոյ, 1694 թվականին, Նահապետ Ուռհայեցի կաթողիկոսը, քանդելով հին վկայարանի վրա շինված եկեղեցին, ի նորո կառուցած է այսօրվան Ս. Շողակաթ եկեղեցին, անույն կաթողիկե փոքր գավիթով մը, առատ նվերներովը նախիջևանցի բարերար Աղամալին:

Մեր օրերուն, «լուսավորն անմահին Աստուծոյ», վերստին վերանորոգվեցավ պատմական այս սուրբ եկեղեցին ալ և բարեկարգվեցավ շրջափակը, սրտաբուխ նվիրատվությամբը հալեպաբնակ ամուսիններ տեր և տիկին Սուրէն և Շաքէ Գալենտերյաններու:

Հավատացյալ հայ ժողովուրդը և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը երախտագիտությամբ պիտի հիշեն միշտ Ս. Շողակաթ եկեղեցիի հավատացյալ բարերարները և պիտի օրհնեն զանոնք:

Թող Տերը վարձահատույց ըլլա անոնց եկեղեցաշեն գործերուն և զանոնք պահե, պահպանե երկա՛ր տարիներ, քաջառողջ ու երջանիկ, խաղաղության մեջ:

Թող միշտ կանգուն, շեն ու պայծառ մնան մեր պատմական բոլոր սրբավայրերը, և թող անոնցմե միշտ լույս և երկնային շնորհներ տարածվին Հայոց աշխարհին և մեր հավատավոր Ազգի բոլոր զավակներուն վրա: Ամեն:

Վազգէն Ա

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 1-ն դեկտեմբերի
1960 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺ.,
ի վանս Սրբոյ Էջմիածնի:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ՍՐԲԱԶԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՈՂՋՈ՜ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻ՜ՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, ՎԵՐԱՏԵՍՉԻՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴՒՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Քաղցր հուզումով գրի կառնենք այս կոնդակը, նշելու համար Ձերդ Սրբազնության երեսուն տարիներու ծառայությունը մեր Ս. Եկեղեցիին:

Վասպուրական աշխարհի զավակ, Աղթամարի խորհուրդովը սնած, Ձեր մանկության օրերուն մեր Ազգին ահավոր տառապանքը տեսած ու ապրած, ոտաբոբիկ ու քաղցած, Ձեր թշվառ հայրենակիցներուն հետ, գաղթի սև օրերուն Ս. Էջմիածին հասած, ապա որբացած և երկար թափառումներե վերջ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքը ապաստան գտած, Ձեր ջանասեր ուսմանց և Ձեր իրավ արժանիքներուն շնորհիվ կուսակրոն քահանա ձեռնադրված եք, և որպես ուխտապահ և անձնվեր միաբան, ծառայած եք Ս. Քաղաքի Հայոց Պատրիարքական Աթոռին, զանազան հոգևոր, վարչական ու կրթական պաշտոններ վարելով հավասար բարեխղճությամբ և արդյունավետությամբ:

Իսկ վերջին չորս տարիներու ընթացքին, Մեր կողքին եք ահա, իբրև վերատեսուչը Մայր Աթոռիս Հոգևոր Ճեմարանին, գնահատված ու սիրված Մեզմե և Մեր ամբողջ միաբանութենեն:

Այսպիսով, Ս. Շողակաթ եկեղեցիին գոյությունը կբարձրանա մինչև Դ դար, Ս. Գրիգոր Լուսավորիչ և Տրդատ աշխարհաշեն թագավորի ժամանակները:

Ավելի ուշ, աղոթքի այս տունը կոչվեցավ նաև ՇՈՂԱԿԱԹ, «քանզի ի նմա շող առաւօտեղէն ի Հօրէ լուսոյ ծագեաց», կամ ՄԱՐԻԱՆԵԻ ՎԱՆՔ, անունովը Ս. Հռիփսիմե կույսի խումբին նահատակ Մարիանեի, որուն սուրբ նշխարներուն վրա բարձրացած է Ս. Շողակաթ եկեղեցին: Այսօր ալ, եկեղեցիին հարավային կողմը, կգտնվի նահատակ կույսի վեմ-տապանը, ուխտի սրբավայր մը մեր հավատացյալներուն համար:

Ս. Շողակաթ եկեղեցին ալ դարերու ընթացքին ենթարկված է շարք մը ավերածություններու, Արարատյան դաշտին մեջ գտնվող մեր հոգևոր-իմացական այլ մեծ կեդրոններուն հետ, և ի վերջո, 1694 թվականին, Նահապետ Ուռհայեցի կաթողիկոսը, քանդելով հին վկայարանի վրա շինված եկեղեցին, ի նորո կառուցած է այսօրվան Ս. Շողակաթ եկեղեցին, անոյուն կաթողիկե փոքր գավիթով մը, առատ նվերներովը Նախիջևանցի բարերար Աղամալին:

Մեր օրերուն, «յուսովն անմահին Աստուծոյ», վերստին վերանորոգվեցավ պատմական այս սուրբ եկեղեցին ալ և բարեկարգվեցավ շրջափակը, սրտաբուխ նվիրատվությամբը հալեպաբնակ աստվածասեր տեր և տիկին Սուրեն և Շաքե Գալենտերյաններու:

Հավատացյալ հայ ժողովուրդը և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը երախտագիտությամբ պիտի հիշեն միշտ Ս. Շողակաթ եկեղեցիի հավատացյալ բարերարները և պիտի օրհնեն զանոնք:

Թող Տերը վարձահատույց ըլլա անոնց եկեղեցաշեն գործերուն և զանոնք պահե, պահպանե երկա՜ր տարիներ, քաջառողջ ու երջանիկ, խաղաղության մեջ:

Թող միշտ կանգուն, շեն ու պայծառ մնան մեր պատմական բոլոր սրբավայրերը, և թող անոնցմե միշտ լույս և երկնային շնորհներ տարածվին Հայոց աշխարհին և մեր հավատավոր Ազգի բոլոր զավակներուն վրա: Ամեն:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 1-ն դեկտեմբերի
1960 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԹ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ՍՐԲԱԶԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ**

ՈՂՋՈ՜ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻ՜ՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, ՎԵՐԱՏԵՍՉԻՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Քաղցր հուզումով գրի կառնենք այս կոնդակը, նշելու համար Ձեր Սրբազնության երեսուն տարիներու ծառայությունը մեր Ս. Եկեղեցիին:

Վասպուրական աշխարհի զավակ, Աղթամարի խորհուրդովը սնած, Ձեր մանկության օրերուն մեր Ազգին ահավոր տառապանքը տեսած ու ապրած, ոտաբոբիկ ու քաղցած, Ձեր թշվառ հայրենակիցներուն հետ, գաղթի սև օրերուն Ս. Էջմիածին հասած, ապա որբացած և երկար թափառումներե վերջ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքը ապաստան գտած, Ձեր ջանասեր ուսմանց և Ձեր իրավ արժանիքներուն շնորհիվ կուսակրոն քահանա ձեռնադրված եք, և որպես ուխտապահ և անձնվեր միաբան, ծառայած եք Ս. Քաղաքի Հայոց Պատրիարքական Աթոռին, զանազան հոգևոր, վարչական ու կրթական պաշտոններ վարելով հավասար բարեխղճությամբ և արդյունավետությամբ:

Իսկ վերջին չորս տարիներու ընթացքին, Մեր կողքին եք ահա, իբրև վերատեսուչը Մայր Աթոռիս Հոգևոր Ճեմարանին, գնահատված ու սիրված Մեզմե և մեր ամբողջ միաբանութենեն:

Ձերդ Սրբազնության հոգևոր գործունեության երեսնամյա այս հանգրվանին, Մեզ համար հույժ մխիթարական է տեսնել Ձեր անձին ու Ձեր կյանքին մեջ՝ ճշմարիտ հոգևորականը՝ հեզ և խոնարհ, սրտով բարի և մաքուր, ժիր և կարգապահ, միշտ հավատարիմ Ձեր ուխտին, Ձեր կոչումին, մեր Ս. Եկեղեցիի և մեր ժողովրդի սիրովը տոգորված, միշտ պատրաստ աշխատելու անձանձրույթ և անտրտունջ:

Ահա քրիստոնեական իրավ առաքինություններ, որոնցմով կփայլի Ձեր հոգևոր-բարոյական անձնավորությունը:

«ԵՐԱՆԻ՜ ՈՐ ՍՈՒՐԲ ԵՆ ՍՐՏԻՒՔ, ԶԻ ՆՈՔԱ ԶԱՍՏՈՒԱԾ ՏԵՍՑԵՆ»:

Իբրև հայրական սիրո և անկեղծ գնահատանքի արտահայտություն, կշնորհավորենք Ձեր հոգևոր ծառայության երեսուն տարիները և Ձերդ Սրբազնության կշնորհենք ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ, մաղթելով Ձեզ կյանքի և աշխատանքի նոր երկար, խաղաղ տարիներ քաջառողջությամբ, որպեսզի մինչև խոր ծերություն ապրիք և խնդությամբ ծառայեք Տիրոջ Այգիին մեջ, ի շինություն մեր ժողովուրդի հոգևոր կյանքին, ի փառս աստվածակառույց Ս. Էջմիածնին և երջանկություն Մեզ և Ձեզ:

Վազգեն Ա

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 4-ն դեկտեմբերի
1960 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԹ.
ի վանս Սրբոյ Էջմիածնի:

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
# ՊՐՈՖԵՍՈՐ ՍԻՐԱՐՓԻ ՏԷՐ ՆԵՐՍԵՍՅԱՆԻՆ
# ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ
# ՇՔԱՆՇԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՊՐՈՖԵՍՈՐ ՍԻՐԱՐՓԻՆ ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆԻՆ, ՀԱՐԱԶԱՏ ԴՍՏԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈ՜ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻ՜ՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ի՜նչ մեծ ուրախություն է Մեզ համար հաստատել, թե մոտ կես դար առաջ անդունդի եզրին հասած մեր ժողովուրդը, այսօր ոչ միայն վերածնած է և իր Մայր Երկիրը կվերաշինե գմայլանքի արժանի թափով, այլև մեր նախնյաց հանճարի լույսը վերստին ծագած, կշողա Հայաստան աշխարհի վրա, մեր շատ զավակներուն կյանքին ու գործին մեջ:

Եվ ավելին տակավին, Հայրենի հողի վրա աճող ու զարգացող մեր գիտնականներու և արվեստագետներու կողքին, կաճին ու կզարգանան տաղանդաշատ մշակներ նաև Սփյուռքի հայության ծոցին մեջ, որ անբաժանելի և հարազատ մասն է Հայաստանյայց:

Դուք Ձեր վաստակով կհանդիսանաք մին այդ ստեղծագործ մշակներեն և շատոնց ի վեր Ձեր անունը կփայլի հայ գիտության և կյանքին երկնակամարին վրա:

Հայոց հին մշակույթի, յատկապես մատենագիտության և մանրանկարչության կալվածին մեջ, Ձեր աշխատությունները մնայուն գործեր են և մնայուն արժեքներ՝ հայագիտության համար: Ձեր ամբողջ կյանքը և գործունեությունը արտասահմանի գիտության մեծ կեդրոններու մեջ, թանկագին ընծա մըն է՝ մատուցված հայ մշակույթին և հայ ժողովուրդին:

Մխիթարական է Մեզ համար հաստատել նաև, որ Դուք հավատարիմ զավակն եք մեր Ս. Եկեղեցիին և հարազատ Ս. Էջմիածնին, որուն հանդեպ

Ձեր ունեցած պաշտամունքի զգացումը լուսապսակը կկազմե Ձեր գիտական գործունեության:

Փրկչի Իջման Ս. Սեղանեն ողջո՜յն և օրհնությո՜ւն Ձեր կյանքին և Ձեր գործին: Եվ, իբրև հայրապետական գնահատանք, ընդունեցե՛ք Մեզմե Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանը և կրեցե՛ք զայն Ձեր կուրծքին վրա երկար, երկա՜ր տարիներ, քաջառողջությամբ, խաղաղությամբ: Թող Տե՛րը միշտ լուսավորե Ձեր միտքն ու հոգին և պարգևե Ձեզ աշխատանքի անսպառ եռանդ, որպեսզի շարունակեք Ձեր գիտական հայրենասիրական մեծ առաքելությունը՝ ի փառս հայ մշակույթի և ի փառս Հայ ազգի:

«Ողջ լերուք, զօրացեալ ի Հոգին Սուրբ և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ: Ամէն»:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 28-ն Նոյեմբերի
1960 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԹ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի:

# Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

## ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Հավերժի գիրկն անցավ իրադարձություններով հարուստ և ստեղծագործ աշխատանքի ևս մի տարի՝ 1960 թվականը, և ահա նորը՝ 1961 թվականը, որպես նոր կյանքի սպիտակ մատյան, որ բաց ենք անում ամանորի խոհերով, երազանքներով, գործունեության և աշխատանքի նոր եռանդով, հեռանկարներով:

Ժամանակի տեսակետից հին և նոր տարին նույնն են, հավերժական, անփոփոխ: Հավիտենականության խորհուրդն ենք զգում և արբում նոր տարվա գալուստով: Մարդն է, որ ԳՆՈՒՄ է, ԱՆՑՆՈՒՄ, ՓՈՓՈԽՎՈՒՄ, իսկ ժամանակի հետ, ժամանակի մեջ ՄՆՈՒՄ է մարդու գործը միայն: Տարին նորանում է, մարդու ՆՈՐ ՀԱՎԱՏՈՎ, ՆՈՐ ԽՈՀԵՐՈՎ ԵՎ ՆՈՐ ԳՈՐԾՈՎ: «Զի հինն անց և արդ նոր եղն ամենայն» (Բ Կորնթ. Ե 17):

Արդարև, ժամանակի մեջ անցնում է մարդը հավերժի գիրկը, բայց մնում է մարդու գործը որպես կոթող, հուշարձան սխրագործության:

Մարդու գերագույն կոչումն է հավերժական այդ ժամանակը լցնել ազնիվ ու բարի գործերով, վեհ ու վսեմ խոհերով ու իդեալներով, արդյունաշատ աշխատանքով՝ ի բարօրություն ժողովրդի, Հայրենիքի և մարդկության:

Հին տարվա մայրամուտին և ամանորի լուսաբացին, որպես ժողովուրդ և եկեղեցի, մեր մտածումներն ու զգացմունքները առաջին հերթին կենտրոնանում են երկու հիմնական, ներշնչող ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ վրա:

Ազգիս Վեհափառ Հայրապետը, հունվարի 6-ին, Մայր Տաճարում խոսած Ծննդյան Իր քարոզի մեջ, անդրադառնում էր հայ ժողովրդի կյանքում այսօր կենսական նշանակություն ունեցող հոգևոր-քաղաքական այդ երկու առանցքներին, որոնց շուրջ պտտվում է ողջ հայ կյանքը և՛ Մայր Հայրենիքում, և՛ Սփյուռքում: «ՀԱՅ ՀՈԳԻԻ ԿԵՆԴԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՔՐԱՄԱՔՈՒՐ, ԻՐԱՎ ՈՒ ԱՆՍՊԱՌ» երկու աղբյուրներն են Հայ Եկեղեցու Գլուխ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Մայր Հայրենիքը:

Ամանորի և Ս. Ծննդյան բովանդակալից Իր պատգամի մեջ, Վեհափառ Հայրապետը, ակնարկելով այդ երկու աղբյուրներին, ասում է. «Ո՜Վ ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, Ա՛ՅՍ ՆՇԱՆՈՎ ՊԻՏԻ ԱՊՐԻՍ, Ա՛ՅՍ ՆՇԱՆՈՎ ՊԻՏԻ ՀԱՂԹԵՍ ԵՎ ԱՂ ՊԻՏԻ ՑՄԵՌՆԻՍ ԴՈՒՆ. ԵՐԲԵ՛Ք, ԵՐԲԵ՛Ք»:

Մեր ժողովուրդը, նոր տարվա սեմին, իր Հայրենիքում, աճել է, մեծացել բարոյապես, հոգեպես, «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարյուր»:

Ազգային-եկեղեցական տեսակետից, 1960 թվականը մեր եկեղեցական տարեգրության մեջ պատմական տարի հանդիսացավ մանավանդ նրանով, որ Ամենայն Հայոց Հայրապետը, խաղաղության առաքելությամբ, հովվապետական այցելություն տվեց արտասահմանյան 7 երկրների եկեղեցական համայնքներին, Իր հավատացյալ հոտին, «ՎԱՍՆ ՆԵՐՔԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱ-

ՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ»,— ինչպես նշել է Վեհափառ Հայրապետը Իր Ծննդյան գեղեցիկ քարոզի մեջ:

Վերլուծելով հովվապետական Իր այցելության հոգևոր-բարոյական, ազգային-եկեղեցական և հայրենասիրական նշանակությունը, Վեհափառ Հայրապետը ասում էր Իր քարոզում. «Այս ամառ կատարած Մեր հովվապետական այցելությունը հԱմերկա՝ Հյուսիսային և Հարավային, Մեզ անգամ մը ևս համոզեց, թե չկա մեր Ազգին և Եկեղեցիին համար ավելի մեծ բարիք, քան ներքին խաղաղությունը, քան ներքին միությունը և համերաշխ գործակցությունը Ս. Էջմիածնի հավիտենական լույսին և օրհնության ներքև, հանուն մեր սուրբ հավատքի պահպանման, հանուն մեր Ս. Եկեղեցիի պահպանման, հանուն Մեր պանդուխտ զավակներուն կյանքին պահպանման, հանուն հայ հոգիի կենդանության, օտար, հյուրընկալ ափերու վրա»:

Վերածնված հայ ժողովուրդը և լուսաշող Մայր Հայրենիքը, մեր պարծանք Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, նոր տարվա շեմքին, հայ կյանքում իրենց առաքելությամբ ոչ միայն հանդիսանում են փրկության լաստը ալեկոծությանց մեջ ծփացող Սփյուռքի հայության համար, այլ նաև ավելի քան երբևէ, լույս են մութի դեմ, միություն՝ բաժանման դեմ, անխորտակելի ամբարտակ՝ ձուլման դեմ, ինչքան էլ նոր վտանգներ մոտենան հայոց երդիկներին:

Մայր Հայրենիքը և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հզոր են ու անխորտակ և կենսունակությամբ լի, այժմ և հավիտյան:

Նոր տարվա լուսաբացին, քրիստոնեական եկեղեցիների զանգերը ավետում են ի լուր աշխարհի՝ «մեծ և սքանչելի խորհուրդ»-ը, խաղաղության իշխանի ծնունդը, «ԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ»:

Պատմության մեջ մի անգամ ծնված խաղաղության իշխանը, «որ բնակեաց ի մեզ», կարող է ծնվել բոլոր մարդկանց սրտերում, նրանց բարոյական և հոգևոր կյանքում ամեն օր, եթե գտնի Բեթղեհեմի մսուրի մաքուր ու խաղաղ մթնոլորտը: Մարդը ստեղծվել է աստվածային սիրով և մարդու սիրույն մեջ պետք է Աստված ուրախանա: «Աղոթքի և սպասումի և շնորհներու այս մեծ պահուն,— ասում է Վեհափառ Հայրապետը Ծննդյան Իր պատգամում,— մեր հուսացյալ հոգիները կրկին կլեցվին սրբազան հույզերով և բղձերով՝ վասն խաղաղության մեր հոգիներուն, վասն խաղաղության Եկեղեցվույն մերոյ և ազգիս Հայոց, վասն խաղաղության համայն մարդկության կյանքին:

...Մեր օրերու կյանքը մեծ սպասումն է վերջնական և ամբողջական խաղաղության լուսաբացին»:

Անցնող տարում խաղաղության ուժերը է՛լ ավելի աճեցին, համախմբվեցին և աչքի ընկնող հաջողություններ հասան պատերազմը կանխելու իրենց վճռականության մեջ:

Այսօր, նոր տարվա շեմքին, մարդկությունը հուզող հրատապ հարցը խաղաղության պահպանման խնդիրն է: Բարի կամքի տեր հազարավոր մարդիկ, գիտության, արվեստի, մշակույթի ներկայացուցիչներ, հոգևոր մեծ ղեկավարներ պայքարում են խաղաղության համար, կանխելու համար պատերազմի վտանգն ու սպառնալիքը: Նոր պատերազմը հսկայական զոհեր կխլի մարդկությունից և ողջ քաղաքակրթությունը կվերածի փլատակների:

Մեր օրերում, յուրաքանչյուր ազնիվ մարդու համար, չկա ավելի բարձր պարտականություն, քան խաղաղության պայքարի մասնակցությունը: Բոլոր ազնիվ մարդկանց մեջ կա այն անսասան հավատը, որ ԲԱՐԻՆ ԿՀԱՂԹԻ ՉԱՐԻՆ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ, ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ: «Ես խօսիմ զարդարութիւն և իրաւունս փրկութեան»:

Նոր տարին ուրեմն գալիս է խաղաղության, արդարության, իրավունքի երգը շուրթերին, վասնզի չկա փրկություն առանց խաղաղության:

Խաղաղության հարցը երբե՛ք այսքան վճռականորեն օրակարգի վրա չէր դրված, որովհետև խաղաղության հարցը, այսօր մանավանդ, անխզելիորեն կապվել է բովանդակ մարդկության բախտի հետ, սերունդների ապագայի հետ:

ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԳԱՎԱՃՄԱՆ, ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ Է: Ահա թե ինչո՛ւ պատերազմը կանխելու, խաղաղությունը պահպանելու համար, անդուլ կերպով, վճռականորեն և հաստատակամ պայքարում են երկրագնդի բարի կամքի տեր միլիոնավոր մարդիկ:

Նոր տարվա շեմքին, թո՛ղ երկրագնդի վրա հաղթանակեն խաղաղության, եղբայրության, բարեկամության գաղափարները, որպեսզի մեկընդմիշտ վերջ տրվեն պատերազմի նոր սպառնալիքներին և ոչնչացվեն մասսայական ոչնչացման, մահաբեր զենքերի բոլոր պաշարները:

Թո՛ղ Նոր տարին լինի օրհնյալ և երջանիկ տարի, և աշխարհի վրա ծագի ճշմարիտ խաղաղության ցանկալի արշալույսը, իր հետ բերելով երջանիկ տարվա պայծառ պսակը, ըստ սաղմոսերգուի՝ «Օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քո»:

Թո՛ղ օրհնվի Նոր տարվա պսակը, և բարի ու քաղցր տարի լինի բոլորի համար, բոլոր երդիկների տակ:

Ինչպես Վեհափառ Հայրապետն է նշում Իր Ծննդյան քարոզում, «սիրո և խաղաղության և միասնության ոգին թող իջնե ու բազմավորե նաև մեր Ս. Եկեղեցին ներս: Այդ ոգիով թող լուսավորվին ու ջերմանան մտքերն ու սրտերը մեր Եկեղեցվո նվիրապետական Աթոռներու Գահակալներուն, և սուրբ սեղաններու բոլոր սպասավորներուն, և մանավանդ Մեր հավատացյալ բոլոր զավակներուն»:

Շնորհավո՛ր Նոր տարի և Ս. Ծնունդ, մեր մոտիկ և հեռավոր եղբայրներ և քույրեր:

## Ա Մ Ա Ն Ո Ր Ի   Ա Ռ Ի Թ Ո Վ
## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ Ա Զ Գ Ե Ն   Ա   ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Ա Ռ Ո Ւ Շ Ա Ն Յ Ա Ն Ի Ն

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Ք Ո Չ Ի Ն Յ Ա Ն Ի Ն

Ե Ր Ե Վ Ա Ն

Հայ եկեղեցու և Մեր անունից հաճեցեք ընդունել Մեր սրտագին շնորհավորանքները Նոր Տարվա առիթով:

Մաղթում ենք Ձեզ անձամբ և մեր բարեխնամ կառավարության բոլոր անդամներին քաջառողջություն և շինարար գործոց հաջողություն: Աղոթող ենք մեր ժողովրդի բարօրության և ամբողջ աշխարհի խաղաղության համար:

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

---

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ Գ Ա Ս Պ Ա Ր Յ Ա Ն Ի Ն

Ե Ր Ե Վ Ա Ն

Նոր տարվա ուրախ առիթով հաճեցեք ընդունել Մեր ջերմ շնորհավորանքները և բարեմաղթությունները անձամբ Ձեզ և պատվարժան Խորհրդի բոլոր անդամներին:

Աղոթում ենք, որ Նոր տարին լինի երջանիկ, խաղաղ, նոր հաջողությունների տարի:

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Վ Ա Զ Գ Ե Ն Ա-ԻՆ

Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և իմ անունից շնորհակալություն եմ հայտնում նոր տարվա առթիվ Ձեր շնորհավորականի և ամբողջ աշխարհում ժողովուրդների տևական խաղաղության բարեմաղթությունների համար։

Ջերմորեն շնորհավորելով Ձեր նոր տարին, ցանկանում եմ Ձեզ և բաջառողջություն և ուրախ տարի։

Շ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ե Ր Ե Վ Ա Ն

---

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում նոր տարվա առթիվ Ձեր եղած շնորհավորանքի և բարեմաղթությունների համար, ջերմորեն շնորհավորելով Ձեր նոր տարին։

Ցանկանում եմ Ձեզ բաջառողջություն և երջանկություն։

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ե Ր Ե Վ Ա Ն

---

Հանեցեք ընդունել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի անդամների և անձամբ իմ ջերմ շնորհավորանքները նոր տարվա առթիվ։

Ցանկանում ենք Ձեզ բաջառողջություն, խաղաղ ու երջանիկ տարի։ Թող նոր տարին լինի Սովետական Միության և ամբողջ աշխարհի ժողովուրդների խաղաղության տարի, որի ամրապնդման համար Դուք ևս բերում եք Ձեր գնահատելի մասնակցությունը։

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ե Ր Ե Վ Ա Ն

---

## ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՌ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻՆ (*ՄՈՍԿՎԱ*),
ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (*ՍՏԱՄԲՈԼ*),
ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ-ԻՆ (*ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ*),
ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԵՓՐԵՄ Բ-ԻՆ (*ԹԲԻԼԻՍԻ*),
ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԴՈՍԻՈՍԻՆ (*ԴԱՄԱՍԿՈՍ*),
ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՋԵՈՖՐԻԻՆ (*ԼՈՆԴՈՆ*),
ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (*ԲՈՒԽԱՐԵՍՏ*),
ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻԼԻՆ (*ՍՈՖԻԱ*),
ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԵԼԼԱԴԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԿԼԻՏՈՍԻՆ (*ԱԹԵՆՔ*),
ԵԹՈՎՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (*ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱ*),
ՀՆԴԿԱԿԱՆ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԱՐ ԲԱՍԻԼԻՈՍ ԳԵՎԱՐԳԵՍ Բ-ԻՆ (*ՔՈՏՏԱՅԱՄ*),
ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (*ՌԻԳԱ*),
ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (*ՏԱԼԻՆ*),
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԻ ԱԲԲԱՀԱՅՐ ԳԵՐՀԱՐԳԵԼԻ ՀԱՅՐ
ՍՐԱՊԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒԼՈՒՀՈՃՅԱՆԻՆ (*ՎԵՆԵՏԻԿ*),
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԻ ԱԲԲԱՀԱՅՐ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՀԱՅՐ
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՊՈՋՅԱՆԻՆ (*ՎԻԵՆՆԱ*);

«ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ»:

Եղբայրական ջերմ սիրով կմաղթենք Ձեզ քաջառողջություն, երջանիկ հովվապետություն և երկար կյանք, ինչպես նաև Ձեր Ս. Եկեղեցին ու հավատացյալ ժողովուրդին՝ բարօրություն և ծաղկում:

Շնորհավոր Ս. Ծնունդ և երջանիկ նոր տարի Ձեզ:

**ՎԱԶԳԵՆ Ա**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

# ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ողջունում եմ Ձեզ Քրիստոսի Ծննդյան մեծ տոնի առթիվ: Հովիվների հավատով և մոգերի իմաստությամբ երկրպագեցինք մարմնացյալ Բանին Աստուծո: Մեր հոգում ունենալով խաղաղությունը և ապավինելով Աստուծո հանությանն, ուրախությամբ երգենք բարձրյալ Աստուծո փառքը:

Ողջունում եմ նաև Աստուծո ողորմությամբ գալուստը Նոր տարվա: Անընդհատ փոփոխվող օրերի և տարիների ընթացքում, անփոփոխելի, հավիտենական Աստուծո ողորմությունը թող անպակաս լինի:

Սիրո ողջունիվ առ Ձերդ Սրբություն, մնամ Ձեզ անձնվեր ի Քրիստոս՝

ԱԼԵՔՍԻ

ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ

ՄՈՍԿՎԱ

---

Շնորհակալություն հայտնելով Ձեր բարի մաղթանքների համար Ս. Ծննդյան այս օրվա առթիվ, հղում ենք լավագույն շնորհավորանքներ:

ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ

ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

---

Ձերդ Սրբություն, ի Քրիստոս սիրեցյալ եղբայր.

Ջերմացած Բեթղեհեմի մատաղուտ ցեպից, որը մարդկային պատմության և Աստուծո եկեղեցու մեջ աննախընթաց է, բարի հոգով և լայն սրտով ողջունում եմ Ձերդ Սրբության և Ձեր իշխանության ներքո գտնվող սուրբ հոտին, իր աստվածասեր առաջնորդներով և հովիվներով: Շնորհավո՛ր լինի Քրիստոսի լուսապայծառ Ծննդյան տոնը:

Ամբողջ էությամբս ցանկանում եմ մարդկային կյանքի մեջ իրագործումը խաղաղության, որը պարունակվում է հրեշտակների օրհներգության մեջ՝ «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Թող Աստված առատորեն տա մեզ Իր օրհնությունը ի սեր մարդացյալ Փրկչի, այս մեծ և փառահեղ տոնի առթիվ, որն ուրախացնում է և՛ հրեշտակներին, և աստվածասեր մարդկանց, և՛ երկինքը, և՛ երկիրը:

Հանուն Վրաց հնադարյան Ուղղափառ Եկեղեցու, անձամբ իմ և Ս. Սինոդի կողմից, ողջունում եմ Ձեզ և Ձեր աստվածասեր հոտին և նրա հովիվներին՝ մաղթելով «ամ Տեառն ընդունելի» և նոր հաջողություններ Տիրոջ այգու մեջ:

Տե՛ր, «Օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քո» (Սաղմ. ԿԴ 12): «Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց Նորա յաւիտեան, լցցի փառօք Նորա ամենայն երկիր» (Սաղմ. ՀԱ 19):

Ողորմությամբն Աստուծո Ձերդ Սրբության եղբայր՝

ԵՓՐԵՄ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ

ԹԲԻԼԻՍԻ

---

Ի Մարդացյալ Փրկիչն Քրիստոս ընդունեցեք մեր եղբայրական շնորհավորությունները և սրտագին բարեմաղթությունները:

ԹԵՈԴՈՍԻՈՍ

ՊԱՏՐԻԱՐՔ ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ

ԴԱՄԱՍԿՈՍ

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս.

Մի անգամ ևս մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Ծննդյան տոնը հրավիրում է մեզ խոկալու ամենակարող Աստուծո սիրո մասին, որ մեր Պատարագամատույցի բառերով՝ «ետ զՈրդին Իւր Միածին, որ էառ զմերս բնութիւն և ծնաւ ի Սրբոյ Կուսէն»:

Մինչ ամենուրեք բոլոր քրիստոնյաները դարձյալ իրենց ուխտագնացությունն են կատարում դեպի այն մսուրը, որտեղ Կույս Մայրը դիեցնում է իր մանուկ Որդուն, և միանում են հովիվներին և իմաստուն մարդկանց, մատուցելու իրենց երկրպագությունը Նրան. «Զի ի նմա բնակէ ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս» (Կողոս. Բ 9), այնպես էլ եկեղեցիներին բաժանող սահմանները վերանում են՝ մեր Փրկչի հանդեպ երկրպագության մեջ:

Այսօր, ոչ աստվածային ձայների մի Բաբելոն, աշխատում է գրավել մարդկության ուշադրությունը, սպառնալով մարդկանց և ժողովուրդներին՝ արկանքով և ողբերգությամբ: Մեր քրիստոնյա ժողովուրդը, հին սրբերի նման, որոնց մասին կարդում ենք Եբրայեցվոց թղթում, կարիք ունի «զաներևոյթն իբրև տեսանել» ըմբռնելու (Եբր. ԺԱ 27), և հավատարիմ մնալու ճշմարիտ և կենդանի Աստուծո իր պաշտամունքի մեջ, հայտնված այս ժամանակ Իր Որդու կողմից, «Որով ունիմք զփրկութիւն արեամբն Նորա, և զթողութիւն մեղաց՝ մարմնովն Նորա, որ է պատկեր աներևութին Աստուծոյ, անդրանիկ ամենայն արարածոց» (Կողոս. Ա 14—15):

Մինչ քրիստոնյաները միանում են Ս. Ծննդյան այս տոնի առթիվ, միաձայն կրկնելով հրեշտակների օրհներգությունը՝ «Փառք ի բարձունս Աստուածոյ» (Ղուկ. Բ 14), այնպես էլ թող քրիստոնյաների աղոթքները միասին բարձրանան աշխարհի ազգերի և Աստուծո Ս. Եկեղեցու խաղաղության համար:

Իմ սրտագին աղոթքն է, որ ամենակարողն Աստված շնորհի Ձերդ Սրբության և Ձեր համայն հավատացյալ ժողովրդին, այս սուրբ օրերին, Իր խաղաղությունը, որ «ի վեր է քան զամենայն միտս», պահի Ձեր սրտերն ու մտքերը Աստուծո և Իր Որդու, մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի գիտության և սիրո մեջ:

Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս՝

**ՋԵՈՖՐԻ**

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏԸՐԲԸՐԻԻ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ

Լ Ո Ն Դ Ո Ն

---

Տերը նորից Իր ողորմությամբ ուրախացրեց մեզ Մանուկ Հիսուս Քրիստոսի Ծննդյան տոնակատարությամբ:

Հրեշտակների օրհներգությամբ դեպի Բեթղեհեմի սուրբ մսուրը կուղղեն շատերը իրենց քայլերը երկրպագելու համար, մինչ ուրիշները, հեռվից, հոգեպես, խոնարհությամբ կփառավորեն բարեպաշտության մեծ խորհուրդը:

Ամբողջ սրտով շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը, հավիտենական Աստուծո Ծննդյան օրհնաբեր օրը, որը լցնում է նաև մեր բոլորի սրտերը մեծ խնդությամբ, որ հովիվներին հայտնեց հրեշտակը, Աստուծո փառքով լուսավորված: «Եւ հրեշտակ Տեառն երևեցաւ նոցա և փառք Տեառն ծագեցին առ նոսա և երկեան երկիւղ մեծ» (Ղուկ. Բ 9—11):

Երկնային բարձունքներից նորից հայտարարվում է երկրի վրա խաղաղությունը, նորից տրվում է մարդկության բարի կամքի ուխտը: Որքա՜ն հրաշալի է այդ մեր աչքերին: Մեծ սաղմոսերգուի խոսքերով գոչենք. «Եկայք ցնծասցուք ի Տէր. աղաղակեսցուք առ Աստուած Փրկիչ մեր: Կանխեսցուք առաջի Նորա խոստովանութեամբ և սաղմոսիւք աղաղակեսցուք առ Նա» (Սաղմ. ՂԴ 1—2): Նրա շնորհիվ, «եցոյց Տէր զփրկութիւն իւր, առաջի ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր» (Սաղմ. ՂԷ 2):

Անսահման սիրով շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը Տիրոջ Ս. Ծննդյան տոնի առթիվ և ի սրտե մաղթում ենք Ձերդ Սրբության, հայ հոգևորականության և համայն հայ հավատացյալ ժողովրդին խաղաղ և երջանիկ կյանք և բեղուն գործունեության մի նոր տարի:

ՀՈՒՍՏԻՆԻԱՆ

ՊԱՏՐԻԱՐՔ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ

ԲՈՒԽԱՐԵՍՏ

Աշխարհ է գալիս Տերը և մեր հավատք ավելի է ամրանում, մեր հոգիները լցվում են վերածնված հույսով, դեպի բարին և խաղաղությունը հաստատուն տենչանքով:

Մի անգամ ևս շնորհավորում եմ Ձերդ Սրբության Ս. Ծննդյան տոնը, իմ և Սուրբ Սինոդի անունից, ջերմագին հայցում եմ մարդացյալ Մանուկ Հիսուս Քրիստոսից՝ օրհնել առաջիկա նոր տարին, որպեսզի նա լինի Տիրոջ բարեբաստիկ տարի, տարի՝ աստվածային նոր ողորմության Ձերդ Սրբության համար, տարի՝ խաղաղության և բարգավաճության՝ Ձեր բարեպաշտ ժողովրդի և համայն աշխարհի համար:

Ապավինում եմ Ձերդ Սրբության աղոթքին և մնում Ձերդ Սրբության խոնարհ որդի ի Քրիստոս՝

ԿԻՐԻԼ

ՊԱՏՐԻԱՐՔ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ

ՍՈՖԻԱ

Շատ ուրախ եմ ստացած լինելուս համար Ս. Ծննդյան տոնի առթիվ Ձեր շնորհավորություններն ու սիրո պատգամը: Արդարև, Ձերդ Սրբությունը ազնվությունն է ունեցել հիշելու մեզ և մեր եկեղեցուն, մեր Փրկչի ծննդյան հանդիսության այս մեծ տոնին, և մենք շատ երախտապարտ ենք այդ ազնիվ մտածումների համար:

Մենք տեղյակ ենք, որ Հայ եկեղեցին մինչև այժմ էլ հետևում է հին ավանդության, միասին կատարելով Ս. Ծնունդն ու Աստվածահայտնությունը հունվարի 6-ին: Ցանկանում ենք Ձերդ Սրբության և Ձեր հին ու պատվական եկեղեցուն, մեր Տիրոջ ծննդյան առթիվ, հրեշտակների կողմից ավետված ուրախությունն ու խաղաղությունը: Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերն ու շնորհը, որոնք հոշակվեցին Նրա մկրտության օրը, լինեն Ձերդ Սրբության և Ձեր ժողովրդի հետ ընդմիշտ և մասնավորաբար այս նոր տարվա առթիվ:

Մի անգամ ևս ցանկանալով Ձեզ Աստուծո օրհնությունը, մնամ միշտ Ձերդ ի Քրիստոս Հիսուս՝

ԲԱՍԻԼԻՈՍ

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՔՈՏՏԱՅԱՄ

Ընդունեցինք, Ձերդ Սրբություն, մեր սրտագին ողջույնները Քրիստոսի Ծննդյան մեծ տոնի առթիվ: Ամենաբարձրյալի նոր տարվա օրհնությունները Ձեզ և Ձեր ղեկավարած հնադարյան Հայոց եկեղեցուն: Թող Տերը պտղաբերի Ձեր գործունեությունը քրիստոնեական ցանկալի խաղաղության և ազգերի միջև բարեկամության ոգով:

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՌԻԳԱ

Ձերդ Սրբություն.

Ուրախ եմ Ձերդ Սրբությանը բերելու սրտալիր շնորհավորություն՝ Քրիստոսի հրաշափառ ծննդյան տոնի և առաջիկա նոր տարվա առթիվ:

Աղոթքներս միացնում եմ Ձեր մաղթանքներին՝ աշխարհում խաղաղության հաղթանակի, բոլոր ժողովուրդների եղբայրության համար: Թող մեր մեջ հաստատվի խաղաղություն և փոխադարձ սեր:

Ձերդ Սրբության ցանկանում եմ երկար կյանք և հաջողություն:

Ձերդ անկեղծ՝

**ՅԱՆ ԿԻՅՎԻՏ**

**ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ**

ՏԱԼԼԻՆ.

---

Վեհափա՛ռ Տէր,

Խորին շնորհակալությամբ կարդացի Ձեր Ս. Ծնունդի և ամանորի առթիվ մաղթողագիրը:

Բեթղեհեմի արոտատեղիներու վրա հսկող հոտապան հովիվներու կտրվի երկնքի զվարթուններեն մեծ ավետիսը՝ Բանին մարդեղության և հերկեր խաղաղության: Հովիվները պատգամաբեր եկարգվին աստվածային անհուն ողորմության և մարդասիրության մեծագույն հավաստիքին:

Կմաղթեմ Ձեզ, Ծայրագույն Հովվապետիդ, եար և ուժ հարարբած հսկողությամբ հարուստ հոգևոր առաջնորդելու Ձեր խնամքին հանձնված հոտը, որպեսզի այնանավանդ օրհնությամբ տիրեն հոգիներու և սրտերու մեջ աստվածատուր խաղաղությունը, սերը ու համերաշխ միությունը, գրավականները ամեն հաջողության:

Քաջառողջ երկար տարիներու մաղթանքով՝

**ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՀԱՊՈՋՅԱՆ**

**ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲԲԱ**

ՎԻԵՆՆԱ

# ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ Ա Զ Գ Ե Ն Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ, ԵՐՈՒՍԱՂԵՄ.
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ, ՍՏԱՄԲՈՒԼ.
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ. ԲԵՅՐՈՒԹ.
ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ:

«ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ» սրբազան պատգամը վերստին կհնչե երկնքի և մարդկային խղճի բարձունքներեն, և մեր սրտերը վերստին կլեցվին քաղցր հույզերով, անուշ հույսերով:

Տե՛ր Աստված, խաղաղություն թող ըլլա աշխարհի վրա ամեն տեղ, խաղաղություն թող իշխե ազգերուն վրա բոլոր և ամենուս տուներեն ու սրտերեն ներս:

«ԽԱՂԱՂՈՒԹԻ՛ՒՆ ՀԵՌԱՒՈՐԱՑ, ԽԱՂԱՂՈՒԹԻ՛ՒՆ ՄԵՐՁԱՒՈՐԱՑ», ա՛յս իսկ է «ԼՐՈՒՄՆ ՕՐԻՆԱՑ ԵՒ ՄԱՐԳԱՐԷԻՑ», զի «ԱՍՏՈՒԱԾ ՍԷՐ Է» և «ԱՍՏՈՒԱԾ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ»:

Սեր և խաղաղություն նաև Ձեզ՝ սիրելի՛ Սրբազան եղբայր, Ձեզ՝ հոգեշնորհ և արժանապատիվ հոգևոր հովիվներ, Ձեզ՝ թեմական-եկեղեցական վարչության հարգարժան անդամներ և մեծահարգ երեսփոխաններ ու խորհրդականներ, Ձեզ՝ եկեղեցանվեր տիկնանց, երիտասարդաց միության անդամներ և դպրաց դասեր, Ձեզ՝ ազգային-մշակութային, հայրենակցական և բարեսիրական կազմակերպության անդամներ, Ձեզ՝ հայ վարժարաններու և կիրակնօրյա դպրոցներու ազնիվ մշակներ և սիրասուն աշակերտներ, և մանավանդ քեզ՝ հույժ սիրեցյալ, հավատացյալ ժողովուրդ մեր, որ ի Հայաստան աշխարհ և որ ի սփյուռս աշխարհի:

Ձեզ բոլորիդ լույս և շնորհք, զորություն և խնդություն Ս. Ծննդյան Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի:

Ձեզ բոլորիդ բարի օրեր, խաղաղ օրեր արևով լի, առատինի և սուրբ գործոց հաջողությամբ պսակումով:

Ձեզ բոլորիդ ուժ և եռանդ, միասնության ոգի արդար, կամք անընկուն՝ եկեղեցին և Ազգը մեր պահպանելու միշտ կենդանի, միշտ անսասան, միշտ փառավոր, շեն ու պայծառ:

Սուրբգրական Հայոց աշխարհեն, ամենայն հայոց Ս. Էջմիածնեն, սրտաբուխ սիրով Ձեզ բյուր մաղթանքներ և բյուր օրհնություն և ողջո՛ւյն, ողջո՛ւյն:

Շնորհավո՛ր Նոր տարի և Ս. Ծնունդ:

«ՍԷՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՓՐԿՉԻՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՂԻՑԻ ԸՆԴ ՁԵԶ: ԱՄԷՆ»:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական խորհուրդներին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանին (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության մեծարգո նախագահ դոկտ. ժոզե դե Ազերեդո Պերտիգաոյին (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի հանձնախմբի նախագահ պր. Երվանդ Աղաթանյանին (Նյու-Յորք), Արգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օժանդակ հանձնաժողովին (Բեյրութ), հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

## ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ամանորի և Ս. Ծննդյան առթիվ համայնքն իր լրությամբ և մենք, համբուրելով Վեհիդ Աջը, կխնդրենք ընդունիլ բոլորիս սրտագին շնորհավորանքն ու բարեմաղթանքները՝ վասն բարեկարգության եկեղեցվո, բարեզարդության Մայր Աթոռո և Վեհիդ քաջառողջությամբ արևշատության, եկեղեցանվեր ձեռնարկներու արդյունաշատ հաջողությանց:

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ՍՏԱՄԲՈԼ

Նոր տարվան և Ս. Ծննդյան տոներու առթիվ կփութամ հղելու Ձերդ Սրբության իմ, ինչպես նաև Ս. Հակոբի միաբանության լավագույն մաղթանքները: Քրիստոսի Ծննդյան և Աստվածահայտնության տոներու առթիվ կառաքենք մեր ջերմ աղոթքները, որպեսզի ողորմածն Աստված շարունակե անսասան պահել մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, ինչպես նաև մեր Հայաստանը, և շնորհել Ձերդ Սրբության, ինչպես նաև մեր Հայրենիքի ղեկավարներուն երկար կյանք, առողջություն և բարգավաճում:

Եղբայրական իմ զգացումներով՝

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Ամանորի և Ծննդյան տոներուն առիթով կներկայացնենք շնորհավորություն, կմաղթենք Վեհիդ երկար, բարեբաստիկ տարիներ, Մայր Աթոռո ծաղկում, բարգավաճում:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲԵՅՐՈՒԹ

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ, ամենաջերմ և հարգալից զգացմունքներով գրված, արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերից, թեմակալ առաջնորդներից, ազգային-եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

*Հունվարի 6-ին, ուրբաթ օրը, Մայր Տաճարում, Քրիստոսի Հրաշափառ և Ս. Ծննդյան տոնի առիթով, Վեհափառ Հայրապետը մատուցեց հանդիսավոր սուրբ պատարագ։*

*Ժամը 11-ին, Նորին Ս. Օծությունը, Վեհարանում զգեստավորված, եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր Տաճար։*

*Սուրբ Սեղանին սպասավորում են գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Հայկազուն արքեպիսկոպոսները, հոգեշնորհ Տ. Եղիշե, Տ. Հուսիկ վարդապետները և սարկավագների խումբը։*

*Մայր Տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել պաշտոնական անձինք, Գերագույն Հոգևոր Խորհրդի, Վերստուգիչ Հանձնաժողովի անդամները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը։*

*Սուրբ պատարագը, վեհությամբ և հանդիսավորությամբ, շարունակվում է մինչև «Հայր մեր»։*

*Հոգեկան ուրախությամբ և հետաքրքրությամբ լսվում է Վեհափառ Հայրապետի Ս. Ծննդյան բովանդակալից հետևյալ պատգամը**.

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

Մեր պապերու սուրբ հավատքով ոգեշնչված, ժամանակի հեռուներեն և մեր խղճի խորեն, վերստին կլսենք երկնային քաղցր պատգամը՝

«ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ»:

Աղօթքի և շնորհներու և սպասումի այս մեծ պահուն, մեր հուսացյալ հոգիները կրկին կլեցվին սրբազան հույզերով և իղձերով՝ վասն խաղաղութեան մեր հոգիներու, վասն խաղաղության եկեղեցվույն մերո և Ազգիս Հայոց, վասն խաղաղության համայն մարդկության կյանքին:

Շնորհներովը մեր Տիրոջ և Փրկչի Ս. Ծննդյան, թող լուսավորվի ճանապարհը ժողովուրդներուն և թող սիրով ճմլվին սրտերը բոլոր մարդոց, որպեսզի բացվին բոլորին աչքերը և տեսնեն, թե եղբայրներ են և հարազատ զավակները միևնույն Աստուծոյն, հարազատ զավակները միևնույն մարդկային ցեղին, միևնույն հողեն ծնած, միևնույն արեով սնած:

Մեր օրերու կյանքը մեծ սպասումն է վերջնական և ամբողջական խաղաղության լուսաբացին:

Մեր բոլոր մտածումները, մեր բոլոր ձեռաց գործերը թող ընծա դառնան՝ ի խնդիր այդ մեծ ու փրկարար լուսաբացի գալստյան:

«ՓԱ՜ՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ, ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ», եղիցի, եղիցի և եղիցի, զի այս իսկ է «կատարումն օրինաց և մարգարէից»: Զի «Խաղաղության Աստված» է մեր Արարիչը, զի «Խաղաղության իշխան» է մեր Տերը և Փրկիչը Հիսուս Քրիստոս: Զի «Աստված սեր է» և սիրով է ստեղծած աշխարհը և մարդիկ:

* *Նույն օրը, երեկոյան, Երևանի ռադիոկայանից ձայնասփռվեց Վեհափառ Հայրապետի Ս. Ծննդյան քարոզը։*

Սիրեցյալ և հավատացյալ որդիք Մեր հարազատ. այս սրբազան պահուն, երբ Միածնաէջ այս հնադարյան Ս. Տաճարին մեջ կատարենք ու կփառաբանենք հրաշալի ծնունդը Միածին Որդվույն, ուխտենք, ուխտե՛նք բոլորս մնալ հավատարիմ խաղաղության երկնային պատգամին, և խորհուրդով, բանիվ և գործով, ամեն մեկս մեր կերպով և չափով աղոթենք ու աշխատինք խաղաղության գործին հաջողության համար ամբողջ աշխարհի մեջ, խաղաղության գործին հաջողությանը համար մեր Եկեղեցիին և մեր Ազգին մեջ:

Խաղաղության նվիրական ճանապարհին, անցնող տարվան ընթացքին ի գործ դրած մեր ճիգերուն վրա, ավելցնենք նորերը, ավելի հավատքով, առավել եռանդով, առավել լավատեսությամբ:

Աղոթենք, որ պետությանց ղեկավարները գործեն և ընթանան խաղաղության և արդարության ճանապարհով, և միջազգային հարցերը լուծվին առանց սուրի և առանց հուրի: Խաղաղությունը և ընդհանուր զինաթափումը մեր օրերու, անխտիր բոլոր ժողովուրդներուն սրբազան իղձն է: Այլևս կարելի չէ պատերազմի պատրաստությանց մասին մտածել ու գործել, այլ միայն խաղաղության և անոր վերջնական ու ամբողջական ամրապնդման մասին, ամբողջ աշխարհի մեջ:

Մեր մտածումը, մեր ճիգերը կեդրոնացնենք նաև վասն ներքին խաղաղության և միության Հայաստանյայց Ս. Եկեղեցիին և համայն հայ հավատացյալ ժողովուրդին:

Այս ամառ կատարած Մեր հովվապետական այցելությունը հԱմերիկա՝ Հյուսիսային և Հարավային, Մեզ անգամ մը ևս համոզեց, թե չկա մեր Ազգին ու Եկեղեցիին համար ավելի մեծ բարիք քան ներքին խաղաղությունը, քան ներքին միությունը և համերաշխ գործակցությունը Ս. Էջմիածնի հավիտենական լույսին և օրհնության ներքև, հանուն մեր սուրբ հավատքի պահպանման, հանուն մեր Ս. Եկեղեցիի պահպանման, հանուն Մեր պանդուխտ զավակներուն կյանքի պահպանման, հանուն հայ հոգիի կենդանության ստար, հյուրընկալ ափերու վրա:

Այո՛, Մենք տեսանք, մոտեն տեսանք ու զգացինք ներկայությունը և ներգործությունը բազում վտանգներու, որոնք Սփյուռքի մեջ կսպառնան հայության հոգևոր-ազգային կյանքին: Այո՛, այնտեղ վտանգը մեր դռներուն առջև կանգնած է: Եվ մեր պանդուխտ զավակները կրնան այդ դռները և՛ բանալ, կրնան և՛ փակել, նույնիսկ ամուր փակել:

Վտանգին առաջ դռները կբացվին, այո՛, երբ Սփյուռքի Մեր զավակները շարունակեն մնալ անմիաբան ու պառակտյալ, և հոգիով խռով ու հեռու մեր հավատքի աստվածադիր վեմ. հավերժական Ս. Էջմիածնեն և հայրենի իրականության կենսատու աղբյուրներեն:

Եվ ընդհակառակը, անոնք կրնան վտանգին առաջ դռները ամուր փակել և զանոնք անխորտակելի դարձնել՝ սուրբ հավատքի ճշմարիտ ու խորունկ ապրումով, մեր Ս. Եկեղեցիի միությամբ և ամրապնդումով Ս. Էջմիածնի հրաշագործ զորությամբ, և նաև հաղորդումովը հայ մշակույթի արժեքներուն, որոնք զմայլելի թափով և վավերական գեղեցկությամբ կծլին ու կծաղկին մեր Մայր հողին վրա:

Հայ ժողովուրդը անհավոր ողբերգություններու և ծով թշվառությանց ընդմեջեն անցնելով, ահա քառասուն տարիներ հետո կանգնած է կենդանի և կենսուրախ, հոգեպես հզոր և շինարար: Այսպես է, որ հայ ժողովուրդը խոր մխիթարությամբ և արդար հպարտությամբ կդիմավորե իր հայրենի վերածնունդի և վերաշինության քառասնամյակը:

Այսօր մեր Մայր Հայրենիքի դաշտերն ու ձորերը, գյուղերն ու քաղաքները լեցուն են հացով, լույսով և խնդությամբ: Այստեղ հայերը կապրին խաղաղ ու ապահով, և կերազեն ու կկառուցանեն անդադար: Անոնք կերազեն ու կկառուցանեն իրենց համար, իրենց զավակներուն և իրենց թոռներուն համար, ամենայն հայոց գալիքին, մեր Ազգի հավիտենական փառքին համար:

Ահա, սիրելի՛ք Մեր, հայ ժողովուրդի, հայ հոգիի կենդանության մաքրամաքուր, իրավ ու անսպառ աղբյուրները՝ Ս. Էջմիածին և Մայր երկիր Հայոց:

Ո՞վ տարագիր հայ ժողովուրդ, ա՛յս նշանով պիտի ապրիս, ա՛յս նշանով պիտի հաղթես, և ա՛լ պիտի չմեռնիս դուն, երբե՛ք, երբե՛ք:

Իբրև Եկեղեցի և իբրև Ազգ, այս ուխտով, այս լավատեսությամբ կդիմավորենք Մենք մեծ ավետիսը Փրկչի Ս. Ծննդյան և պատգամը «խաղաղութեան և ի մարդիկ հաճութեան»: Այս ուխտով, այս լավատեսությամբ կողջունենք արշալույսը այս նոր տարվույն:

Թող Տերը Իր սիրո և խաղաղության ոգին տարածե համայն աշխարհի և բովանդակ մարդկության վրա: Խաղաղությո՛ւն բոլոր սահմաններուն վրա, խաղաղությո՛ւն բոլոր սահմաններեն անդին, խաղաղությո՛ւն հեռավորաց և մերձավորաց:

Սիրո և խաղաղության և միաբանության ոգին թող իջնե ու թագավորե նաև մեր Ս. Եկեղեցիին ներս: Այդ ոգիով թող լուսավորվին ու ջերմանան մտքերն ու սրտերը մեր Եկեղեցվո նվիրապետական Աթոռներու Գահակալներուն և Ս. Սեղաններու բոլոր սպա-

սավորներուն, և մանավանդ Մեր հավատացյալ բոլոր զավակներուն։

Սիրելինե՛ր և հարազատնե՛ր Մեր, «ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱ՛Ւ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱ՛Ւ»։ Այս սրբազնասուրբ պահուն, Միածնաէջ այս Ս. Տաճարեն, ձեզ այս մեծ ավետիսը տալով, բարյաց Շնորհատուեն կհայցենք ձեզ բոլորիդ համար անխտիր՝ ողորմություն և լիառատ շնորհներ, որպեսզի ամենքդ ապրիք, աճիք ու ծաղկիք և անսասան մնաք ձեր հավատքով, ձեր քրիստոնեական ավանդություններով, ձեր հայկական հոգիով և անհատնում սիրով ու հավատարմությամբ դեպի ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածին։

Ձեզ կմաղթենք նաև խաղաղ և բարի նոր տարի, արևշատ օրերով, ձեր առաքինի ձեռաց գործոց հաջողությամբ։

Երկնամերձ Արարատի կատարներեն, Փրկչի Իջման Ս. Սեղանեն, Հայաստանի ձեր հավատացյալ եղբայրներեն և քույրերեն և Մեր սրտեն ձեզ բյուր ողջո՛յն և օրհնությո՛ւն։

ՇՆՈՐՀԱՎՈ՛Ր ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ Ս. ԾՆՈՒՆԴ։

«Սէր և խաղաղութիւն և շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ, ամէն»։

*Հավարտ սուրբ պատարագի կատարվեց «Հանդէս ջրօրհնեաց»։*

*Այնուհետև Վեհափառ Հայրապետը, «Խորհուրդ մեծ» Ծննդյան շարականի երգակցությամբ, առաջնորդվեց Վեհարանի Ծաղկյա դահլիճը, և բազմած Հայրապետական Գահի վրա, ընդունեց շնորհավորությունները Մայր Աթոռի միաբանության, պաշտոնական անձանց, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի և վանքի պաշտոնեության։*

*Վերջում Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին, շնորհավորելով Քրիստոսի Ս. Ծննդյան տոնը։*



# ԱՄԱՆՈՐԻ ՀԱՆԴԵՍ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 31-ին, շաբաթ, երեկոյան ժամը 7.30-ին, Հոգևոր ճեմարանի հանդիսության սրահում, ամանորի ավանդական սեղանների շուրջ հավաքված էին ավելի քան 150 հոգի՝ Մայր Աթոռի միաբան, ուսանող և պաշտոնյա։ Ուրախ էին բոլորը, իրենց պարտքը կատարած մարդկանց գոհունակությամբ և արդար խղճմտանքով, ինչպես նաև երախտագիտությամբ լցված դեպի համազգային այն սուրբ հաստատությունը, որ ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինն է, և դեպի նրա արժանավոր Գահակալը, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը։

Ամանորի ավանդական սուրբ սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը, շրջապատված Գերագույն Հոգևոր խորհրդի, միաբանության, Հոգևոր ճեմարանի տեսչական և ուսուցչական կազմերով, ուսանողությամբ և Մայր Աթոռի պաշտոնեությամբ։

Հանդիսության սկզբում հոտնկայս ունկնդրվում է Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի նվագը։ Այնուհետև մեջընդմեջ գործադրության է դրվում ամանորի առթիվ կազմակերպված գրական-գեղարվեստական ծրագիրը։

Երեկույթը բանալով, վերատեսուչ գերապատիվ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը ասում է.

«Ինչքա՜ն քաղցր է այս պահը, երբ համազգային ու սրբազան այս Տան բոլոր ծառայողներս, բարձր աստիճանավորեն մինչև համեստ պաշտոնյան, շրջապատած այս խորհրդավոր սեղանը, հրաժեշտ կուտանք հուզումով, երախտագիտությամբ՝ անցնող տարիին և նոր հույզերով ու բարեմաղթություններով կդիմավորենք Նորը՝ 1961 թվականը։ Երբ կդիտեմ այս սեղանը, միտքս կուգա սաղմոսերգուին սա գեղեցիկ խոսքը. «Զի՞ բարի կամ զի՞ վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին» (Սաղմ. ՃԼԲ 1)։

Արդարև, եղբայրներ ենք բոլորս անխտիր, որ կվայելենք այս սեղաններու վրա դրված Մայր Աթոռի բարիքները, որդիները նույն Ազգին, նույն Հայրենիքին և հոգևոր զավակները նույն սուրբ ավազանին՝ Սրբալույս Մյուռոնով եղբայրացած։

Այսօր, հին տարվա մայրամուտին և նոր օրերու շեմքին, մեր ամենուն սրտերը սովորականեն ավելի ուրախ են և թրթռուն, երբ բոլորված ենք անցնող տարվան վերջին ընթրիքի և ամանորի առաջին սեղանի շուրջ, խորհելու, գծելու մեր ամբողջ տարվան գործունեության ծրագիրը։

Կրկնակի է այսօր մեր ուրախությունը։ Մենք երջանիկ ենք, որ կաշխատինք Մայր Աթոռի հովանիին տակ, Վեհափառ Հայրապետի ղեկավարությամբ, մեր Մայր Հողի վրա, և ուրախ ենք, կատարումովը մեր պարտականություններուն՝ Հոգևոր ճեմարանի այս կալվածեն ներս։

Անցնող տարին նշանավորվեցավ նաև Վեհափառ Հայրապետի արտասահման կատարած հայրապետական ուղևորության բա-

րի արդյունքներով։ Հեռավոր աշխարհներու անկյուններում մեջ ծվարած հայ ժողովուրդի բեկորները տեսան, սիրեցին Ամենայն Հայոց Հայրապետը, և հոգեպես մխիթարվեցան, վերանորոգվեցան Ս. Էջմիածնի սրբազան կամարներեն տարված օրհնություններով և Մայր Հայրենիքի հաջողություններեն տարված անուշ և բարի խաբրիկներով։ Վեհափառ Հայրապետը վերադարձավ Մայր Աթոռի հարազատ ղավակներու անվերապահ և անխառն սիրովը դեպի Ս. Էջմիածինը, դեպի Մայր Հայրենիքը։

Վեհափա՛ռ Տեր, ամանորի այս սեղանի առջև կանգնած, մեր բոլորի սրտագին բարեմաղթությունն այն է, որ Դուք երկա՜ր և երկա՜ր տարիներ բազմիք Լուսավորչի Ս. Գահին վրա՝ ի շինություն և ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո, ի շինություն Հայրենի աշխարհին և ի մխիթարություն հավատացյալ հայ ժողովուրդին։

Այս ուրախալի պահուն, Վեհափա՛ռ Տեր, հանուն Հոգևոր Ճեմարանի վերատեսչության, դասախոսական կազմի և ամբողջ ուսանողության, սրտագինս շնորհակալ ենք Ձերդ Ս. Օծությանն այն բոլոր, բոլո՜ր զոհողություններուն, հոգածության, հայրական ուշադրության համար, որոնք միշտ և հանապազ, ամեն առիթներու մեջ, ցույց կուտաք դեպի այս նվիրական հաստատությունը, Ձեր սրտին մոտ այս կրթական օջախը, ուր, Ձեր նայվածքի տակ, օգնականությամբն Աստուծո և օրհնությամբը Ձերդ Ս. Օծության, կդաստիարակվին Հայ Եկեղեցվո սպասավորության կանչված Ձեր հոգևոր զավակները։

Այս խորհրդավոր պահուն, առ Աստված կբարձրացնենք մեր խոնարհ աղոթքները, մաղթելով, որ Աստված միշտ պայծառ և արևոտ պահե մեր Մայր Հայրենիքը, արդյունավորե մեր հայրենի բարեխնամ կառավարության բոլոր ձեռնարկները և պտղաբերե մեր խաղաղասեր, մեր աշխատասեր, հայրենանվեր ժողովուրդի սուրբ աշխատանքը՝ ի շինություն Հայրենի երկրի։

Հոտնկայս, մեր անդրանիկ բաժակը, լեցված հայրենի անուշ գինիով, բարձրացնենք մեր Հայր և Ուսուցչապետ, Ազգիս սիրելի Վեհափառ Հայրապետի կենացը, մաղթելով Նորին Ս. Օծության երկար հովվապետություն՝ ի պայծառություն Հայաստանյայց Եկեղեցվո, ի շինություն Հայրենի երկրիս»։

Բոլոր ներկաները, հոտնկայս, բաժակ են բարձրացնում Վեհափառ Հայրապետի կենացը, ուրախ ծափերի հնչյունների տակ։ Ամբողջ դահլիճով մեկ հնչում է, հանդիսավոր և վեհ, Մայր Աթոռի հիմնը՝ «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը։

Ամանորի սեղանների շուրջ ստեղծվում է ջերմ, ընտանեկան մթնոլորտ։ Հոգևոր Ճեմարանի երգչախումբը երգում է ցնծագին «Լուռ գիշեր, սուրբ գիշեր» ծննդյան տաղը։ Գ լսարանի ուսանող բարեշնորհ Կարապետ սարկավագ Սուքիասյանը, ի դիմաց Մայր Աթոռի սարկավագների, գրավոր, սրտառուչ ուղերձով շնորհավորում է Վեհափառ Հայրապետի Նոր տարին։ Առաջին լսարանի ուսանող Հովհաննես Աշճյանը արտասանում է Վ. Գ. Ավագյանի «Ձոն Վեհափառ Հայրապետին»։

Ոտքի է Վեհափառ Հայրապետը։ Նոր տարվա խոհերով համակված, Նա բաժակ է բարձրացնում Մայր Հայրենիքի շինության, հայրենի բարեխնամ կառավարության, բովանդակ հայության կենացը։ Ազգիս սիրելի Հայրապետը խոսում է հավատով, հայ ժողովրդի պայծառ ապագայի մասին։ Ողջ դահլիճը, հոտնկայս, ծափահարում է, բաժանելով Վեհափառ Հայրապետի հայրենասիրական ջերմ խոսքերն ու զգացմունքները։

Երգչախումբը կատարում է «Խնչույքի երգ» («Հայոց գինին») խմբերգը։ Բարեշնորհ Անաստաս սարկավագ Մովսիսյանը գրաբար լեզվով արտասանում է Սիմեոն կաթողիկոս Երևանցու «Նոր տարին»։ Բ լսարանի ուսանող Ժիրայր Կոնսուլյանը, հանուն Հոգևոր Ճեմարանի ուսանողության, կարդում է մի ուղերձ՝ Վեհափառ Հայրապետին ուղղված, որդիական երախտապարտ զգացմունքներով գրված, Նոր տարվա շնորհաբեր և բերկրալի գալստյան առթիվ։

Վեհափառ Հայրապետը բաժակ է առաջարկում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, Հայ Եկեղեցու պայծառության և միասնության, մեր նվիրապետական Աթոռների ի Քրիստոս սիրո, անխախտ եղբայրության կենացը։ Բ լսարանի ուսանող Ջոհրապ Նամլյանը արտասանում է Վահան Թեքեյանի «Աղոթք վաղվան սեմին առջև» բանաստեղծությունը։ Ա դասարանցի Գրիգոր Ագըլյանը արտասանում է Ս. Շիրակի «Երևան»-ը։ Բարեշնորհ Հակոբ սարկավագ Պողապալյանը երգում է Կոմիտասյան «Մոկաց Միրզեն», իսկ երգչախումբը կատարում է «Ամեն հայի սրտից բխած» Հայրապետական մաղթերգը։ Ա լսարանցի Կարապետ Քիլիչյանը արտասանում է Վ. Ալազանի «Արագին»։

Ամանորի ուրախ սեղանների շուրջ բոլորված, ժամանակն անցնում է արագ, բովանդակալից և հաճելի։

Վերատեսուչ սրբազան հոր հրավերով, ոտքի է կանգնում Վեհափառ Հայրապետը՝ ներկաներին տալու հայրապետական Իր օրհնությունը և Նոր տարվա պատգամը։

Ընդհանուր խանդավառության և ծափերի տակ, խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, հայրական խրատականներ տալիս միաբանության, ուսանողության, վանքի պաշտոնեության՝ նույն նվիրումով ծառայելու Մայր Աթոռին, Մայր Հայրենիքին և հայ ժողովուրդին։ Իր պատգամի վերջում, Վեհափառ Հայրապետը ջերմ բարեմաղթություններ է անում Մայր Հայրենիքի բարգավաճման և աշխարհում խաղաղության վերջնական հաղթանակի համար։

Ուշ գիշերին, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով վերջանում է Նոր տարվա դիմավորման նվիրված ճեմարանական այս հավաքույթը։






## ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
## ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

### 1960 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՆԻՍՏԻՑ

*ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում Վեհափառ Հայրապետը հանգամանորեն զեկուցեց Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ, Պորտուգալիա և Ֆրանսիա կատարած հովվապետական Իր այցելության հոգևոր, եկեղեցական և ազգային-հայրենասիրական արդյունքների մասին։*

*Գերագույն Հոգևոր Խորհրդի այսօրվա ընդլայնված նիստին հրավիրված էին նաև Վանական խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի, Վեհափառ Հայրապետի արտասահմանյան շրջագայության շքախմբի անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագրության և Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական բաժինների ներկայացուցիչները։*

*Զեկուցման սկզբում Վեհափառ Հայրապետը ողջունեց բոլոր ներկաներին և շնորհակալություն հայտնեց Երևանում և Մայր Աթոռում սրտագին դիմավորության, ինչպես նաև Իր բացակայության ժամանակ Մայր Աթոռում կատարված բազմապիսի աշխատանքների կանոնավորության և արդյունավորության համար։ Ապա Նորին Սրբությունը մոտ երեք ժամ խոսեց հովվապետական Իր չորսամսյա ուղևորության հոգևոր, ազգային և հայրենասիրական նշանակության մասին, ճշգրտորեն տալով պատկերը ԱՄՆ-ի, Կանադայի, Արգենտինայի, Բրազիլիայի, Պորտուգալիայի և Ֆրանսիայի հայ եկեղեցական համայնքների, ազգային-եկեղեցական մարմինների գործունեության, մխիթարությամբ շեշտելով ամեն տեղ հայ ժողովրդի նվիրումն ու հավատարմությունը Լուսավորչի Գահին, Նրա Գահակալին և վերածնված Մայր Հայրենիքին։*

*Իր զեկուցման մեջ Վեհափառ Հայրապետը կանգ առավ նաև Լիսաբոնում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության և նրա ղեկավարներին տված Իր այցելության վրա, բարի լուրեր հաղորդելով ներկաներին Գալուստ Կյուլպենկյան կտակի հետագա հատկացումների մասին՝ Մայր Աթոռի շինարարական ձեռնարկների համար։*

*Վեհափառ Հայրապետի զեկուցումը ընդունվեց խորին գոհունակությամբ։ Գերագույն Հոգևոր Խորհուրդը արձանագրեց Վեհափառ Հայրապետի պատմական այս այցելության ազգային, եկեղեցական և հայրենասիրական բացառիկ նշանակությունը Մայր Աթոռի, Հայ Եկեղեցու և Սփյուռքի հայության համար։*

### 1960 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ՆԻՍՏԻՑ

*ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ սույն նիստում լսեց 1960 թվականի ընթացքում Մայր Աթոռի կողմից կատարվող շինարարական. վերանորոգչական աշխատանքների ընթացքի մասին շինարարական հանձնաժողովի անդամ պր. Եփրեմ Ալեքսանյանի և Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ պր. Արծրուն Գալիկյանի զեկուցագիրը։*

1960 թվականի ընթացքում Նոր Վեհարանի վերակառուցման աշխատանքների շուրջ 60 տոկոսը կատարվել է։ Նոր Վեհարանը, լրիվ վերանորոգված, օգտագործման կհանձնվի 1961 թվականի աշնանը։ Ամբողջությամբ թիթեղապատված է կտուրը, ավարտվել են ջրմուղի, ջեռուցման, կոյուղու, էլեկտրական գծերի անցկացման աշխատանքները։ Ներկայիս կատարվում է Վեհարանի շենքի ներսի ծեփը։ Տեղադրվում են նորաշեն դռներն ու պատուհանները։

Դանդաղ է ընթանում տպարանի շենքի վերանորոգման աշխատանքը, մանավանդ օդափոխության սարքավորման տեղադրումը։

Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի եկեղեցու, Խոր Վիրապի վանքի, Նոր Բայազետի եկեղեցու վերանորոգման աշխատանքները ընթանում են բավարար թափով և կավարտվեն նախատեսված ժամկետներին։

Ավարտվել են Ս. Հռիփսիմեի և Ս. Շողակաթի վանքերի վերանորոգման աշխատանքները։ Կանոնավոր են ընթանում Ս. Գայանեի վանքի շրջափակի պարսպապատման և միաբանական գերեզմանատան պարսպի կառուցման աշխատանքները։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակությամբ արձանագրելով 1960 թվականի ընթացքում Մայր Աթոռի կողմից կատարված շինարարական աշխատանքների բարվոք ընթացքը, զեկուցումների առթիվ կատարեց որոշ դիտողություններ, արեց թելադրություններ և կոնկրետ առաջարկներ՝ նոր թափ հաղորդելու համար 1961 թվականի շինարարական աշխատանքներին, և պարտավորեցրեց Մայր Աթոռի տնտեսական և շինարարական բաժիններին՝ ձեռք առնել անհրաժեշտ բոլոր միջոցները, ըստ նախատեսված պլանի կատարելու և արագացնելու համար Մայր Աթոռի կողմից կատարվող շինարարական աշխատանքները։





# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

**1960 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ, ՇԱԲԱԹ**, տոն սրբոց առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի։

Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

Սուրբ պատարագի երգեցողությունը կատարեց Հոգևոր Ճեմարանի երգչախումբը։

* * *

**ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ, ԿԻՐԱԿԻ**, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Զուաիկ վարդապետ Սանթուրյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

**ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ, ԿԻՐԱԿԻ**, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

**ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ, ՇԱԲԱԹ**, տոն Սրբոյն Յակովբայ Մծբնայ հայրապետին։

Երեկոյան Հոգևոր Ճեմարանում կազմակերպվեց գրական-գեղարվեստական երեկույթ նվիրված մեծ սրբի Հակոբ Մծբնա հայրապետի հիշատակին։

Երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

**ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ, ԿԻՐԱԿԻ**, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

**ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ**, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց սրահում, դասախոսություն կարդաց ռումինացի հայտնի հայագետ, Բուխարեստի համալսարանի պրոֆեսոր Վլատ Բենեցեանուն «Հայ մշակույթի զարգացման պատմությունից» թեմայով, որը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

Դասախոսության ներկա էին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և վանքի պաշտոնեությունը։

Դասախոսության վերջում վերատեսուչ Հայկազուն սրբազանը շնորհակալություն հայտնեց հարգելի հայագետին՝ շահեկան դասախոսության համար։

* * *

**1961 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ԿԱՂԱՆԴ ԵՎ ՏԱՐԵՄՈՒՏ։**

Ամանորի առթիվ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, «Թող զմա այս ամ եւս» (Ղուկ. ԺԳ 7) բնաբանով։ Քարոզիչ սրբազանը անդրադարձավ Մայր Հայրենիքի շինարարության բուռն վերելքին և Մայր Աթոռի վանական-վարչական, հոգևոր շինության աշխատանքներին, սրտագին բարեմաղթություններ արեց այս տարի ևս Հայրենիքի և ժողովրդի բարօրության, Մայր Աթոռի անսասանության և պայծառության, և Վեհափառ Հայրապետի կյանքի արևշատության համար։

Հավարտ սուրբ պատարագի, Իջման Ս. Սեղանի առաջ, կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի հանդիսադրությամբ։

Մաղթանքից հետո, հավատացյալները աջահամբույրով շնորհավորեցին Վեհափառ Հայրապետին ամանորի առթիվ։

Հավարտ սուրբ պատարագի, Մայր Աթոռի միաբանության անունից Վեհափառ Հայրապետի նոր տարին շնորհավորեց Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 3-ին, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր
Աթոռից հրաժեշտ առնելով Բեյրութ մեկնեց
բարեշնորհ Ժիրայր սարկավագ Ճերեճյանը,
որը 1959 թվականին հաջողությամբ ավար-
տել էր Հոգևոր Ճեմարանի լսարանական
բաժինը և շուրջ մեկ և կես տարի Մայր
Աթոռում անցկացրել փորձի մի շրջան, հո-
գևոր ծառայության ասպարեզում։

Նույն օրը, Բեյրութից Մայր Աթոռ ժամա-
նեցին Հոգևոր Ճեմարանի թվով 5 նոր ուսա-
նողներ։ Երևանի կայարանում ուսանողնե-
րին դիմավորեց և Մայր Աթոռ առաջնորդեց
Հոգևոր Ճեմարանի ավագ վերակացու արժա-
նապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարութ-
յանը։ Նոր ուսանողները Մայր Տաճարում
իրենց ուխտը կատարելուց հետո, ներկայա-
ցան վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն
արքեպիսկոպոսին, որը ապա նրանց առաջ-
նորդեց Վեհարան, Վեհափառ Հայրապետի
Ս. Աջը համբուրելու և Նրա օրհնությունները
ստանալու համար։

Ս. Ծննդյան արձակուրդներից հետո, հուն-
վարի 9-ին, հետ քննության նոր ուսանողնե-
րը բաժանվեցին համապատասխան դասա-
րաններին վրա։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 5-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Ճրագա-
լոյց Ծննդեան և Աստուածայայտնութեան
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Մայր Տաճարում կատարվեց Ճրագալույցի
արարողությունը։ Սուրբ պատարագը մատու-
ցեց լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ
արքեպիսկոպոսը։ Հավարտ սուրբ պատա-
րագի կատարվեց նախատոնակ։

Արարողության նախագահում էր Վեհա-
փառ Հայրապետը, որը հավարտ սուրբ պա-
տարագի, «Խորհուրդ մեծ և սքանչելի»
Ծննդյան շարականի երգակցությամբ, առաջ-
նորդվեց Վեհարան, որտեղ օրհնեց միաբա-
նությանը և արձակեց։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 7-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Յիշատակ մե-
ռելոց»։

Մայր Տաճարում պատարագեց արժանա-
պատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտ-
չյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատար-
վեց հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցե-
լոց»։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 8-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճա-
րում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրր-
տիչ ավագ քահանա Մկրտչյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ
Հայրապետը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 10-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր
Աթոռից հրաժեշտ առավ և Հալեպ, իր ծնող-
ների մոտ վերադարձավ բարեշնորհ Սարգիս
սարկավագ Սարջյանը, որը 1960 թվակա-
նին փայլուն հաջողությամբ ավարտել էր
Հոգևոր Ճեմարանի լսարանական բաժինը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 13-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, «Տօն անուա-
նակոչութեան Տեառն Մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի»

Մայր Տաճարում պատարագեց արժանա-
պատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 14-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Տօն ծննդեան
Սրբոյն Յովհաննու Կարապետին»։

Մայր Տաճարում պատարագեց արժանա-
պատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությա-
նը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 15-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճա-
րում սուրբ պատարագ մատուցեց արժանա-
պատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ
Հայրապետը։



# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՍՆԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

*1960 թվականի նոյեմբերի 29-ին լրացավ Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասնամյակը։*

*Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, նշվեց վերածնված հայ ժողովրդի ազգային տոնը։*

*Նոյեմբերի 29-ին, երեքշաբթի օր, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում նախագահեց քառասնամյակի առթիվ կատարված Կառավարական մաղթանքին։*

*Գոհաբանական այս աղոթքին ներկա էին նաև Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Գերագույն Հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Հոգևոր Ճեմարանի վերատեսչությունը, դասախոսական կազմը և ուսանողությունը, վանքի ամբողջ միաբանությունը և պաշտոնեությունը, ինչպես նաև բազմաթիվ հավատացյալներ։*

*Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասնամյա հոբելյանի առթիվ Մայր Տաճարում կայացած գոհաբանական մաղթանքին ներկա էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը։*

*Կառավարական մաղթանքից հետո, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց մեծ դահլիճում, կազմակերպվել էր դրական-գեղարվեստական ցերեկույթ, պանծալի քառասնամյակին նվիրված։*

*Ժամը 1.30-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով ժամանում է Հոգևոր Ճեմարան և նախագահում քառասնամյակի հոբելյանական հանդիսության։*

*Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասնամյակին նվիրված հանդեսը բացվում է Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի նվագումով, որն ունկնդրվում է հոտնկայս։*

*Ապա Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը հանդես է գալիս հոբելյանական տոնի ազգային նշանակության և խորհրդին նվիրված բացման գեղեցիկ ճառով։*

*«Մեր Հայրենիքը,— եզրակացնում է սրբազանը,— այսօր բոլորում է սովետական կարգերի հաստատման իր քառասնամյակը։ Թովանդակ հայ ժողովրդի հետ, Հոգևոր Ճեմարանն էլ, իր ուրախության և երախտագիտության սրտագին տուրքն է բերում համազգային այս մեծ տոնի առթիվ, վերածնված հայ ժողովրդին և Մայր հողին, իր այս հանդիսավոր հավաքույթի միջոցով»։*

*Հոգևոր Ճեմարանի երգչախումբը, պր. Հրանտ Գևորգյանի ղեկավարությամբ, հաջողությամբ կատարում է «Արև ծագեց մեր նոր աշխարհին», «Երիտասարդական քայլերգ», «Ծաղկի՛ր, ազատ իմ Հայրենիք» խմբերգերը։*

*Ա լսարանի ուսանող Հովհաննես Աշճյանը հուզումով արտասանում է սփյուռքահայ ծերունազարդ բանաստեղծ Վահան Մալեզյանի «Քառասնամյակ խորհրդային Հայաստանի» խորագրված նոր բանաստեղծությունը, Բ լսարանի ուսանող Կարպիս Սեբայտարյանը հաջողությամբ արտասանում է Նաիրի Զարյանի «Վերածնունդ»-ը, Բ դասարանի ուսանող Դավիթ Դիլանյանը՝ Սիլվա Կապուտիկյանի «Ներբող Հայաստանի»-ն։*

Մայր Տաճարի երգչախմբի մենակատար-
ներ Ավետյանա Զաքարյանը և Լիլիկ Հա-
կոբյանը հանդիսության իրենց մասնակ-
ցությունն են բերում մեներգերով. առա-
ջինը երգում է «Ասում են ուրին», իսկ երկ-
րորդը՝ «Երևանի գիշերները»։
Հայր և որդի Հրանտ և Կոմիտաս Գևորգ-
յանները դաշնամուրի վրա կատարում են Ա.
Խաչատրյանի «Վալս»-ը։

Հայաստանում սովետական կարգերի
հաստատման քառասնամյակին նվիրված
ճառով հանդես է գալիս «Էջմիածին» ամ-
սագրի խմբագիր և Հոգևոր Ճեմարանի դա-
սախոս պր. Արթուն Հատիտյանը.

«Այսօր, հպարտությամբ և բերկրանքի
զգացմունքներով, մեր ժողովուրդը նշում է
վերածնված Մայր Հայրենիքի փառապանծ
տոնը՝ Հայաստանում սովետական կարգերի
հաստատման քառասնամյակը։

Այսօր, Նոյեմբերի 29-ին, վերածնված
հայ ժողովուրդը, համազգային այս մեծ տո-
նին, ուրախ է և հպարտ՝ երանությամբը
այն ժողովրդի, որ երկար դարերի տրկու-
թյունից հետո, համառ պայքարով և հերո-
սությամբ, նվաճել է իր ազատությունը և
արդարորեն ուրախանում է իր Հայրենի-
քով, իր նվաճումներով և իր պայծառ ապա-
գայով։

Մեր ժողովուրդը ազգային իր մեծ տոնը
նշում է նորանոր ստեղծագործություններով
հայ մշակույթի, արվեստի, գիտության, ար-
դյունաբերության և գյուղատնտեսության
ոլորտներում պայմաններում, սերտո-
րեն համախմբված հայրենի իշխանության
շուրջ, միասնական, համերաշխ, ազգային
իր բոլոր իղձերով ։

Սփյուռքը ևս, ազգային հպարտության ա-
մենատոնում զգացմունքներով, նշում է Հայ-
րենիքի քառասնամյակը։ Սփյուռքի հայու-
թյան բոլոր խոհերը, իղձերը, սերը մեզ հետ
են միշտ, հավիտյան։

Համազգային այս ցնծատոնին, վերածըն-
ված հայ ժողովրդի հոբելյանական այս բա-
րեբաստիկ առիթով, իր ամենաջերմ խըն-
դակցությունն ու սրտաբուխ օրհնությունն
է բերում Հայաստանյայց Առաքելական Ե-
կեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավո-
րությամբ, աղոթելով ի սրտե Հայրենիքի և
նրա ժողովրդի բարօրության, բարգավաճ-
ման, խաղաղության և լուսապայծառ ապա-
գայի համար։

Քիչ առաջ, Մայր Տաճարում, Վեհափառ
Հայրապետի նախագահությամբ, բոլորս էլ
աղոթեցինք, որպեսզի ընդմիշտ, հավիտ-
յան և հավերժորեն «Օրհնեսցի և պահպա-
նեսցի և նախախնամեսցի պահեսցի Հանրա-
պետութիւն Խորհրդային Հայաստանի»։

Ս. Էջմիածինը եղել է միշտ հայրենասի-
րության օջախ։ Հայ եկեղեցին, այս 40 տա-
րիների ընթացքում, իր հոգևոր և հայրենա-
սիրական պարտքը կատարել է և կկատարի
վերածնված հայ ժողովրդի նկատմամբ՝ մեծ
սիրով և սրբությամբ։ Մայր Աթոռը միշտ
հայ ժողովրդի հետ է, հայրենաշեն ու ժո-
ղովրդանվեր աշխատանքներում։

Մարդկային հոգու բնատուր հարստությու-
նը կազմող այլազան ազնիվ զգացմունքնե-
րի մեջ կա մեկը, ամենից տիրականը, ամե-
նից նվիրականը, նույնիսկ մայրական սի-
րուց էլ ավելի։ Դա Հայրենի հողի սերն է,
հայրենասիրությունը։

Այդ զգացմունքը է՛լ ավելի վառ է ար-
տահայտվում փոքր ազգերի մեջ, որոնք հա-
ճախ դժբախտությունն են ունեցել կորցնելու
իրենց անկախությունը։

Այդ փոքր ժողովուրդների թվում է և հայ
ժողովուրդը, «ածու փոքր»-ը, որի անցյալի
պատմությունը ուրիշ բան չէ, եթե ոչ ազ-
գային ազատագրական պայքարի մի շա-
րան, «Մահ ու իմացեալ մահ է, մահ իմա-
ցեալ՝ անմահութիւն», հայրենասիրական
գաղափարի լույսի տակ։

Պատմությունն է անկաշառ դատավորը
ժողովուրդների և ազգերի հայրենասիրու-
թյան։

Հայ ժողովուրդը բաց ճակատով, արդար
խղճմտանքով է ներկայանում պատմու-
թյան դատավճռին։

Հայրենիքը սրբություն է, որ միայն նվի-
րում, զոհողություն է պահանջում։

Մեր քաղաքական անկախության կորստից
հետո, պատերի նման փշուր-փշուր ենք եղել
և ցրվել ողջ աշխարհի մեջ՝ «զօրէն մոլորա-
կան աստեղաց», բայց Հայրենիքի սերը,
հույսը մեր սրտերում։ Անցյալի մեր գրա-
կանության ամենասիրելի թեման հայրենա-
սիրությունն է։

Աբովյանը, հայրենասիրության մեր նա-
հապետին, այրվում էր Ազգի, Հայրենիքի վե-
րակենդանության կրակով. «Հայաստան
հրեշտակի պես կանգնել առաջիս, ինձ թև
էր տալիս... Ա՜հ, ազգի սերը ի՜նչ լազաթ
ունի, ի՜նչ զորությունը»։

Աբովյանը մտածում էր, որ «Աղասու պես
որդիք ունեցողը աշխարհումս էլ ինչ դարդ
ունի»։ Բայց խեղճ Աբովյանի աչքերի առաջ
Աղասու պես հերոսներ զոհվում էին հանուն
Հայրենիքի, իսկ Հայաստանի վրա չէր ծա-
գում փրկության արշալույսը։

Քաջության հետ, նահատակության հետ,
հայոց էր նաև մի մեծ, ազնիվ ու բարի ժո-
ղովրդի անկաշառ բարեկամությունը, հո-
վանին։

Հանձին ռուս ժողովրդի, հայ ժողովուրդը
գտավ իր ավագ, հերոս եղբորը։

Երբեք պատահականություն չէր, որ հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունը միշտ սերտորեն կապված է եղել ռուս ժողովրդի անվան և պատմության հետ։

Հանձին Ռուսաստանի, հայ ժողովուրդը տեսնում էր այն իրական ուժը, որի օգնությամբ հնարավոր կլիներ թոթափել գերության լուծը և նվաճել ազատություն։

1915 թվականին, արյան մեջ խեղդվեց մեր հասարակական, քաղաքական, մշակութային զարթոնքը. ուզեցին ողջ-ողջ գերեզմանել աշխարհի հնագույն մշակույթ և պատմություն ունեցող ժողովուրդներից մեկին՝ հայ ժողովրդին։ Բայց պատմությունը հայության ճակատին գրել էր ոչ թե մեռնել, այլ ապրել:

Հայ ժողովուրդը, գերեզմանի եզրին, աչքերը դարձրեց դեպի հյուսիս։

1920 թվականին մեր երկիրը ողբի ու որբի Հայրենիք էր, զարկված և զրկված Հայրենիք, իսկ ժողովուրդը՝ արյունաքամ, վիրավոր, արի ու հերոսական, ոտքի կանգնեց ազատագրության դրոշը պարզած։ Ճգնաժամային այդ օրերին օգնության հասավ ռուս ժողովուրդը։

Հնչել էր հայ ժողովրդի ազատագրության և փրկության ժամը։

Մոխիրների, ցավի ու արցունքի տակից. հարյա՜վ ոգին որբ հայ ժողովրդի և վերածնվեց։

Արյունաքամ հայ հոգու և հայ հողի վրա ծագեց պայծառ, խոստումնալից առավոտ։

Նոյեմբերի 29-ը հաղթանակի օր է հայության համար, մեր ժողովրդի ազատագրական պայքարի փառավոր և հերոսական մեկ էջը, որ փրկություն բերեց մեր ժողովրդին և դարձավ սքանչելի ազգային վերածննդի սկիզբ:

40 տարին պատմական մի մեծ ժամանակաշրջան չէ. բայց պատմական են մեր Հայրենիքի և ժողովրդի նվաճումները։

Անցնող 40 տարիների ընթացքում, բառացիորեն հրաշքի հավասար, վիթխարի փոփոխություններ են կատարվել մեր մշակույթի, արվեստի, գիտության, գրականության, ժողովրդական կրթության և լուսավորության, առողջապահության, բնակարանային շինարարության, գյուղատնտեսության, արդյունաբերության բնագավառում և հոգևոր-բարոյական նոր կյանքի կերտման գործում։

Այսօր Հայաստանը դարձել է լույսի՛ Հայրենիք, հույսի՛ Հայրենիք, նոր ու հզոր Հայաստան:

Այսօր Հայաստանում անցյալի ավերակների տեղ բարձրանում են վարդագույն կառույցներ, ճարտարապետական նոր կոթողներ, լուսաշող քաղաքներ, շեն ու պայծառ ավաններ, որոնց մեջ ապրում և ստեղծագործում է ապագային վստահ աչքերով նայող մի բախտավոր հայ նոր սերունդ։

Այս բոլորը յուրաքանչյուր հայ մարդու սիրտը լցնում է ազգային հպարտության ամենաանուշ զգացմունքով։

Այսօր բյուր երազներ են ծաղկում վերածնված հայ ժողովրդի հոգում։

Անցնող յուրաքանչյուր օր երջանկության, բարգավաճման նոր գարուններ է բերում մեր երկրին և ժողովրդին։

Այսօր պայծառ է վերածնված մեր ժողովրդի ներկան, է՛լ ավելի վառ՝ նրա ապագան:

Այսօր հայ ժողովուրդը, իր Հայրենի հողի վրա, վառել է իր գոյության, հավերժության խարույկը և վառ հավատով է նայում ավելի պայծառ գալիքին,

Ծաղկի՛ր, ազատ իմ Հայրենիք, ուռճացի՛ր, մեծացի՛ր։

Փա՜ռք վերածնված հայ ժողովրդին։

Բոցավառ ողջո՜ւյն մեր պանծալի, մեր նոր ու հզոր Հայրենիքին, Սովետական Հայաստանին։

Վերջում, հայրենասիրական խանդավառ մթնոլորտի մեջ և ցնծագին ծափերի տարափի տակ, խոսք առավ Ազգիս սիրելի Վեհափառ Հայրապետը՝ բերելով Իր օրհնությունը պանծալի քառասնամյակին.

«Այսօր բոլորս ուրախ ենք: Մեր սրտերը լեցուն են բացառիկ ջերմությամբ, որովհետև բոլորս ալ խորապես կճանաչենք և կգնահատենք արժեքը այն իրականության, որ մենք կկոչենք Մայր Հայրենիք: Եվ խորապես կգնահատենք այն ամենը, որ բովանդակությունը կկազմեն Մայր Հայրենիքի գաղափարի:

Մայր Հայրենիք ըսելով կճանաչենք մեր այս երկիրը, որուն վրա հաստատված է հայ պետությունը իր ինքնավար կառավարությամբ, իր ղեկավարներով և պաշտոնատարներով, իր քաղաքական և վարչական կազմակերպությամբ:

Մայր Հայրենիք ըսելով կճանաչենք մեր ժողովուրդի զանգվածը, որ կապրի այստեղ. իր պատմական հողին վրա, ֆիզիկապես առողջ և ապահով, զարգացումի և նվաճումի ընթացքի մեջ: Մայր Հայրենիք ըսելով կճանաչենք մեր վերաշինված քաղաքները ու գյուղերը, մեր երկրի տնտեսական բարգավաճ կյանքը, իր գյուղատնտեսությամբ, իր արդյունաբերությամբ և ճարտարարվեստով: Մայր Հայրենիք ըսելով կճանաչենք նաև աննախընթաց հառաջդիմությունը կրթական, գիտական, մշակութային, գրականության և արվեստներու կալվածին ներս:

Այսօր, մեր արդի Հայաստանը դարձած է արդեն կենդանի. ապրող ու շնչող և զար-

փացող իրականություն մը և մագնիսական ուժ մը, դեպի իրեն քաշող բոլոր այն հայերը, որոնք կապրին հեռավոր ափերու վրա, ցրված ի սփյուռս աշխարհի:

Մեր Մայր Հայրենիքը բոլոր հայերու համար ազգային ինքնագիտակցության և հպարտության կենդանի աղբյուր մըն է և գրավականը մեր ժողովուրդի բոլոր ազնիվ հույսերու իրականացման:

Ահա թե ինչո՞ւ ուրախ ենք և մեր սրտերը լեցուն բացառիկ ջերմությամբ:

Ահա թե ինչո՞ւ Մայր Աթոռը ոգևորությամբ կդիմավորե Խորհրդային Հայաստանի քառասուն տարիները: Եվ ոչ միայն Մայր Աթոռը, այլ բոլոր հայ եկեղեցիները ամբողջ աշխարհի վրա, Ատլանտյանի և Խաղաղականի ափերեն մինչև Միջերկրականի և Գանգեսի ափերը, նույն խանդավառությամբ, կտոնեն մեր Հայրենիքի վերածննդյան հաղթական քառասնամյակը և կգոտեպնդվին Մայր Երկրի ծաղկումով:

Դժբախտ ճակատագիր ունեցավ մեր ժողովուրդը մինչև քսաներորդ դարու առաջին քսանամյակը: Ինչպես ծանոթ է յուրաքանյուրիդ՝ մեր դարաշրջանի երկրորդ տասնամյակին ահավոր ողբերգություն մը տեղի ունեցավ Հայոց աշխարհին մեջ, որուն զոհ գացին ավելի քան մեկ ու կես միլիոն հայեր Արևմտյան Հայաստանի մեջ:

Երկար դարեր շարունակ անհնար եղավ իբրև հայ ապրիլ՝ խաղաղ, ապահով և ազատ, պատմական մեր հողերուն վրա: Պատմության այս հորիզոնին վրա պետք է տեսնել և գնահատել մեր ներկա իրականությունը, այսինքն մեր վերածնած Հայրենիքը: Այլապես պիտի չկարողանայինք հասկընալ և արժևորել ներկան:

Ահա ուրեմն քառասուն տարիներե ի վեր հայ ժողովուրդը կապրի խաղաղ և բարգավաճ, իր պատմական Հայրենիքի մեկ մասին վրա ու կկերտե իր պայծառ ապագան, խորհրդային ժողովուրդներու եղբայրական միության մեջ:

Հայաստանյայց Եկեղեցին իր կյանքը և ճակատագիրը միշտ կապած է հայ ժողովուրդի կյանքին ու ճակատագրին հետ: Եվ ավելին տակավին՝ Հայ Եկեղեցին ամբողջապես կնույնանա իսկ հայ ժողովուրդին հետ, զի Հայ Եկեղեցին ինքը հայ ժողովուրդն է, իր գոյության և կյանքի որոշ մեկ կերպին մեջ, պատմականորեն նվիրագործված, սրբացած և փառավորված:

Հայ Եկեղեցին, իր գոյության առաջին օրերեն մինչև այսօր, եղած է հայրենասեր և իր առաքելությունը նկատած է՝ Աստուծո խոսքին հետ միատեղ քարոզել նաև և սերմանել հայոց հոգիներուն մեջ՝ սերը Հայրենի հողին: Եվ մեր փոթորկահույզ պատմության ընթացքին, մեր Եկեղեցվո տիպար հոգևորականները պայքարած են և հաճախ նահատակված վասն Հայրենյաց, վասն Հիսուսի մղված մարտերուն մեջ, վտանգի առաջին գծերուն վրա:

Այսպես ահա, Հայաստանյայց Եկեղեցին, առաջնորդությամբը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, կնույնանա հայ ժողովուրդին հետ: Անոր համար Հայ Եկեղեցին իր կոչումով իսկ հայրենասեր է և պետք է մնա այսպես, թե՛ իբրև պարտականություն, թե՛ իբրև իրավունք:

Այս մտածումներով և հույզերով ոգեշնչված, կտոնենք այսօր մեր Հայրենիքի վերածննդյան քառասնամյա տարեդարձը, անգամ մը ևս ուխտելով մնալ անսասան և հավատարիմ մեր պատմության ոգիին, մեր նահատակներուն և մեր ժողովուրդին ու Հայրենիքին գերագույն շահերուն:

Ցնծության և ուխտի այս տոնական օրուն, Մենք կաղոթենք առ Աստված, ամենաջերմ սրտով, և կմաղթենք, որ Տերը առավել անեցնե և զորացնե հայ ժողովուրդը մարմնով և հոգիով, և ծաղկյալ ու անսասան պահե Մայր Երկիրը մեր Հայաստան:

Ողջո՜ւյն և օրհնությո՜ւն Հայաստանի քառասնամյակին:

Ողջո՜ւյն և օրհնությո՜ւն հայ ժողովուրդին:

Ողջո՜ւյն և օրհնությո՜ւն ամենայն հայոց պայծառ ապագային»:

*Հոբելյանական հանդեսը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով։*

*Ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի վերատեսչությունը, համազգային մեծ տոնի պատվին, կազմակերպել էր ընդունելություն Ճեմարանի դահլիճում, մոտ հարյուր հոգու մասնակցությամբ։*

*Վեհափառ Հայրապետը օրհնեց հայրենի բարիքներով ծանրաբեռն սեղանը։ Ստեղծված հայրենասիրական ջերմ մթնոլորտում, ներկաներից շատերը բաժակ առաջարկեցին Հայրենի երկրի, վերածնված հայ ժողովրդի, Հայրենի մեր բարեխնամ կառավարության, Սփյուռքի հայության և աշխարհի խաղաղության կենացը։*

*Գործադրվեց նաև գեղարվեստական հայրենաբույր մի հայտագիր։*

*Ընդունելությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։*

## ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

(Քահանայական ձեռնադրության 30-ամյակի առթիվ)

*1960 թվականի հունիսի 22-ին լրացավ Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի քահանայական ձեռնադրության 30-ամյակը։*

*Այս ուրախ առիթով, դեկտեմբերի 4-ին, կիրակի, Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը և քարոզեց «Ծառայք անպիտանք եմք, զոր ինչ պարտէաք առնել արարաք» բնաբանով։*

*Ապա ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց սրահում, տրվեց ճաշկերույթ ի պատիվ հոբելյար սրբազանի։*

*Սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը։ Ընդունելության ընթացքում Հայկազուն սրբազանին իր քահանայական ձեռնադրության և վանական-վարչական ու մանկավարժական գործունեության 30-ամյակի առթիվ ջերմ ու սրտագին խոսքերով շնորհավորեցին Վեհափառ Հայրապետը, գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Եզնիկ սրբազանները, հոգեշնորհ Տ. Եղիշե և Տ. Մաշտոց վարդապետները, Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից պրոֆ. Ա. Առաքելյանը, Վերստուգիչ Հանձնաժողովի անունից պր. Գ. Բեքմեզյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագրության կողմից պր. Ա. Հատիտյանը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի անունից պր. Պ. Շահբազյանը, Մայր Աթոռի պաշտոնեության կողմից պր. Հ. Առաքելյանը։*



*Հանուն Հոգևոր Ճեմարանի ուսանողության, Թ լսարանի ուսանող Վռամշապուհ Ջիհանյանը կարդաց երախտագիտության և շնորհավորության սրտագին զգացմունքներով գեղուն մի ուղերձ, որն ընդունվեց ջերմորեն։*

*Հանդեսին իրենց մասնակցությունը բերեցին այլ ճեմարանականներ խմբերգերով, մեներգերով և արտասանություններով։*

*Հոբելյանական այս հանդիսության առթիվ արտահայտված հարգանքի, սիրո և շնորհավորության վառ պսակը հանդիսացավ Վեհափառ Հայրապետի բարձր գնահատությունը, որով Նորին Ս. Օծությունը այս երջանիկ առիթով գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանին շնորհեց արքության պատիվ։*

*Հայրապետական այս բարձր գնահատանքը ողջունվեց որոտընդոստ ծափերով։*

***

*Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, ավազանի անունով Հայկ, ծնվել է Վանի Բերդակ գյուղում, երկրագործի ընտանիքում, 1906 թվականի մայիսի 16-ին։ Ծնողների 8 զավակների մեջ կրտսերն*

էր Հայկը և այդ իսկ պատճառով ամենասի-
րելին։
Համաշխարհային առաջին պատերազմին,
1915 թվականին, պատանի Հայկը իր հա..ա-
քաղաքացիների հետ գաղթում է իր ծննդա-
վայրից և բազմահազար գաղթականների
հետ հասնում Ղամարլու, Արտաշատ, ուր
3 տարի հաճախում է գաղթականաց վարժա-
րանը, ապա հաստատվում է Երևան։
1917 թվականին, բազմաթիվ գաղթական-
ների հետ, վերադառնում է Վան, և հազիվ
տուն-տեղ եղած, նոր արհավիրքներ են հաս-
նում և նոր դժբախտության դուռ է բացվում
Վասպուրական աշխարհի պատմական ու
պատվական հայ ժողովրդի համար։

Գաղթականի ցուպը ձեռքին, տնաքանդ է
լինում ողջ Վասպուրականը։ 1918 թվակա-
նին, պատանի Հայկը, ծնողների հետ, դաղ-
թում է Սալմաստի վրայով դեպի Պարսկաս-
տանի ճանապարհին, տարագրության արյու-
նոտ ուղիներում, նա կորցնում է իր ծնողնե-
րին, սիրելիներին և ծննդավայրից աքսորա-
կան, սիրելիներից զրկված, կրկնակի որբա-
ցած, ընկնում է Իրաք (Բաղդադ) 1920 թվա-
կանին և ընդունվում Հայկական Բարեգոր-
ծական Ընդհանուր Միության Նահր Օմարի
հայկական որբանոցը։ Նույն տխուր ճակա-
տագրին ենթարկված իր ընկերների՝ Տ. Սիոն.
Տ. Զգոն, Տ. Եղիշե, Տ. Սեբովբե և Տ. Հայրիկ
սրբազանների հետ։

1922 թվականին, պատանի Հայկը փո-
խադրվում է Երուսաղեմ, Արարատյան որբա-
նոցը, իր ուսումը շարունակելու համար։

1923 թվականին ուսումնատենչ երիտա-
սարդ Հայկը, Դուրյան պատրիարքի օրով,
մտնում է Երուսաղեմում բացված Ժառան-
գավորաց վարժարանը, որի քառամյա դաս-
ընթացը հաջողությամբ ավարտելուց հետո,
1927 թվականին սարկավագ է ձեռնադրվում
Դուրյան պատրիարքից, և 1930 թվականին,
ավարտելուց հետո եռամյա աստվածաբա-
նական դասընթացը, կուսակրոն քահանա է
ձեռնադրվում Տ. Մեսրոպ եպիսկոպոս Նշան-
յանից (ապա պատրիարք)։

Երիտասարդ, ժրաջան հոգևորականի առաջ
բացվում է վանական, վարչական, կրթական,
հովվական լայն ասպարեզ։

1930 թվականին նա կարգվում է Երուսա-
ղեմի Հայոց վանքերից Ս. Փրկչի և Ս. Աստ-
վածածնի եկեղեցու տեսուչ։ Միաժամանակ
դասավանդում է Ժառանգավորաց վարժա-
րանում և Ս. Թարգմանչաց վարժարանում։
1936—1941 տարիներին ձեռնհասորեն վա-
րում է Յաֆա քաղաքի Հայոց վանքի տեսչու-
թյունն ու հայ գաղութի հովվությունը։
Վերադառնալով վանք, 1941—1945 թվա-
կաններին նա ծառայում է Ս. Աթոռում որ-
պես կալվածների ընդհանուր ղեկավար՝ կալ-
վածոց տեսուչ անունով։ 1951 թվականից
մինչև 1957 թվականը, համատեղության
կարգով, վարում է նաև Ժառանգավորաց
վարժարանի տեսչությունը։
1954 թվականին նա, իբրև պատգամավոր
հանգուցյալ Գևորգ Զ Կաթողիկոսի թաղման,
եկավ Հայրենիք և Ս. Էջմիածին, իբրև ներ-
կայացուցիչ Երուսաղեմի Պատրիարքության։
1955 թվականին նա նորից ընտրվեց պատ-
գամավոր Երուսաղեմի Պատրիարքության
կողմից՝ մասնակցելու Ազգային-եկեղեցա-
կան ժողովին և կաթողիկոսի ընտրության։
Հայկազուն սրբազանը եպիսկոպոս ձեռնա-
դրվեց 1955 թվականի հոկտեմբերի 6-ին.
Ս. Էջմիածնում, Տ. Տ. Վազգեն Վեհափառ
Հայրապետի կողմից։
1957 թվականի հոկտեմբերին, Հայկազուն
սրբազանը, ընդառաջելով Վեհափառ Հայրա-
պետի հրավերին, ստանձնում է Մայր Աթոռ
Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերատես-
չությունը, որը նա վարում է ձեռնհասորեն
և արդյունավորությամբ։
Հայկազուն սրբազանը ազնիվ, համեստ,
աշխատասեր, բարի և հայրենասեր հոգևորա-
կան է, սիրված և հարգված մեծապես իր ծա-
նոթներից և ժողովրդից։ Նա, որպես հոգևո-
րական, միշտ էլ գտնվել է իր կոչման և
պարտականությունների բարձրության վրա։
Հայկազուն սրբազանի գրչին է պատկա-
նում հայագիտական կարևոր մի ուսումնա-
սիրություն՝ Հովհան Օձնեցու «Ընդդէմ երևու-
թականաց» ճառի թարգմանությունը, ծանո-
թագրությունն ու մեկնությունը։
Հայկազուն սրբազանը գտնվում է իր կյան-
քի ուժերի ծաղկման և հասունության շրջա-
նում։ Ազգը և Եկեղեցին նրանից սպասում են
նոր ծառայություններ։ Սրբազանը կարդա-
րացնի այդ վստահությունը։
Սիրելի Հայկազուն սրբազանին մաղթում
ենք երկար և առողջ կյանք ու բեղմնավոր
գործունեություն։

# ՕՇԱԿԱՆԻ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ

*Մայր Աթոռում Վեհափառ Հայրապետի նախագահության տակ գործող վանական նորոգությանց Ճարտարապետական Հանձնաժողովը, 1960 թվականի իր ծրագրում, նախատեսել էր նաև Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու, Մեծ Սրբի դամբարանի, տաճարի սալահատակման, ներքին բարեկարգության, եկեղեցու հարավային մայթի սալահատակման և եկեղեցու ամբողջ շրջափակի պարսպապատման աշխատանքները։*

*Համաձայն այս ծրագրի, անցնող շինարարական տարում պարսպապատվեց Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հողամասը՝ 310 գծային մետր, Արթիկ տուֆի սրբատաշ քարերով, և ձևավորվեց մետաղյա ճաղերով փողոցի կողմից։ Եկեղեցու հարավային մայթը սալահատակվել է դեղնավուն մաքուր տաշած տուֆ քարերով։*

*Եկեղեցու ներսում, ավագ սեղանի տակ, գեղեցկորեն ձևավորվել է Մեծ Սրբի դամբարանը բազալտ սրբատաշ քարից, սալահատակվել է հատակը բազալտ քարով, վերականգնվել է դամբարանը իր նախկին տեսքով, քերելով ծեփը, և թաղի վրա կանգնեցվել է նոր, բազալտե սրբատաշ քարից տապանաքար,* «Սուրբ Մեսրոպ Մաշտոց, 361—440» *տապանագրությամբ։ Մարմարե հին տապանաքարը, որպես հնություն, մնալու է դամբարանում։*

*Դամբարան տանող նախասենյակը, իր հատակով և աստիճաններով, վերակառուցվել է սրբատաշ բազալտ քարից։ Նույն այդ նախասենյակում զետեղվել է հուշարձանաքար, որի վրա գրված է հայոց Մեսրոպյան երկաթագիր այբուբենը։*

*Եկեղեցում կատարված է ընդարձակ վերանորոգում։ Մնում է շրջափակի սալահատակումն ու մասամբ պարսպապատման լրացումը, հողամասի բարեկարգումը և կանաչապատումը, որը մտնում է 1961 թվականի շինարարական պլանի մեջ։*

*1960 թվականի նոյեմբերի 18-ին ուխտավորարար Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Միլանոյից Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու վերանորոգման բարերար Թորգոմ և Հայկ Ղազարոսյան եղբայրները, որոնք նոյեմբերի 21-ին, երկուշաբթի օրը, ուխտի գնացին Օշական, Ս. Մեսրոպի դամբարանին, տեսան իրենց սրտաբուխ լումաներով կատարված վերանորոգության աշխատանքները և հոգեին ուրախացած ծնրադրեցին Հայ գրերի Մեծ Տեսանողի նոր դամբարանի առաջ, բերելով իրենց երախտագիտության տուրքը Օշականի Մեծ Սրբին։*

*Նոյեմբերի 24-ին, հինգշաբթի օրը, Վեհարանում, Ղազարոսյան եղբայրների պատվին տրվեց ճաշկերույթ, որին ներկա էին Գերա-*



ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ




ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԴԱՄԲԱՐԱՆԻ ՆԱԽԱՍԵՆՅԱԿԻ
ՀՈՒՇԱՐՁԱՆ–ՔԱՐԸ ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԿԱԹԱԳԻՐ ԱՅԲՈՒԲԵՆՈՎ

*(Նախագիծը՝ ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանի)*

գույն Հոգևոր խորհրդի եկեղեցական և աշխարհական անդամները, Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովը, Մայր Աթոռի դիվանապետը, «էջմիածին» ամսագրի խմբագիրը և ուրիշներ։

Սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը։ Ընդունելության ժամանակ հայ ժողովրդի շինարարական-կառուցողական ընդունակությունների մասին խոսեցին դոկտ.-պրոֆ. Ա. Ղարիբյանը, դոկտ.-պրոֆ. Կարո Ղաֆադարյանը, ճարտարապետներ Մ. Մազմանյանը, Վ. Հարությունյանը։ Ղազարոսյան եղբայրների սրտաբուխ նվիրատվության նշանակության մասին խոսեցին գերաշնորհ Տ. Սահակ, Տ. Հայկազուն, Տ. Ղևոնդ սրբազանները, դիվանապետ Հայկ Առաքելյանը և խմբագիր Արթուն Հատիտյանը.

Բարեբար պր. Թորգոմ Ղազարոսյանը, խորապես հուզված այս ջերմ արտահայտություններից, խոսք առնելով նախ իր և եղբոր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք ուխտի գալու սրտագին հրավերի համար, ապա ասաց, որ իրենք մեծահարուստներ չեն, բայց իրենց սրտի պարտքն են համարում՝ իրենց կարողության չափով օգնել Վեհափառ Հայրապետի շինարարական ձեռնարկներին և Մայր Հայրենիքի շինարարության, և որ իրենք սիրով ստանձնել են Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու վերանորոգությունը՝ որպես երախտագիտության տուրք հայ գրերի մեծ գյուտարարի խնկելի հիշատակին և անմահ գործին։

Ընդունելության վերջում խոսք առավ Վեհափառ Հայրապետը, ամփոփ գծերի մեջ և սրտաճմլիկ պատկերներով ներկայացրեց երջանկացի Ղազարոսյան երկու եղբայրների կյանքը, որոնք 1915 թվականի տարագրության ճանապարհի վրա կորցրել էին իրենց նահապետական ընտանիքի բոլոր անդամներին, և հրաշքով ազատված երկու եղբայրները հաստատվել էին Միլանոյում, որտեղ իրենց աշխատասիրությամբ ստեղծել էին իրենց համար նյութական ապահով կյանք։



Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԸ
(Նախագիծը՝ ճարտարապետ Լիպարիտ Սադոյանի)

Վեհափառ Հայրապետը Ղազարոսյան եղբայրներին բնութագրեց որպես ազնիվ, աշխատասեր, էջմիածնասեր և ճշմարիտ հայրենասեր մարդկանց, որոնց սրտի միակ ցանկությունն է հայ Եկեղեցու պայծառությունը և Մայր Հայրենիքի բարգավաճումը։

Իր խոսքի վերջավորության, Վեհափառ Հայրապետը Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու համեստ բարերարների կրծքերը զարդարեց Ս. Գրիգոր Լուսավորչի ադամանդակուռ առաջին կարգի շքանշանով, բոլոր ներկաների ծափերի տակ և Ղազարոսյան եղբայրների երախտագիտական արցունքների մեջ։

Ընդունելությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։

# ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

*1960 թվականի դեկտեմբերի 25-ին, կիրակի, Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց և պատարագի ընթացքում սարկավագ ձեռնադրեց Հոգևոր Ճեմարանի Գ լսարանի 4 ուսանողներին։*

*Ամսի 23-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, վերատեսուչ սրբազանը կատարեց նորընծաների կոչման արարողությունը և Ձեռնադրության Մաշտոցի համաձայն սուրբգրական ընթերցումներով տվեց «պաշտօն փոքր սարկաւագութեան»։*

*Հաջորդ օրը, կիրակի, սուրբ պատարագը շարունակվում է մինչև «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով» աղոթքը։*

*Ապա խարտավիլակ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը, «ի ձայն բարձր», դիմում է ձեռնադրող սրբազանին հանուն Ս. Եկեղեցվո, «զի (զայս անուն) կիսասարկաւագունս, զորս ընծայէ քեզ, ձեռնադրեսցես մեզ ի սարկաւագս»։*

*Ձեռնադրող սրբազանը ապա հարցեր է տալիս նորընծաների հոգևոր արժանավորության, իմաստության և կենցաղի սրբության մասին։*

*Խարտավիլակի դրական վկայությունից հետո, ձեռնադրող սրբազանը ասում է. «Կոչեմք (անունները տալով) զկիսասարկաւագունս ի պաշտօն սարկաւագութեան» (էջ 15)։*

*Ապա նվիրյալները, «ի ծունս», մոտենում են Ս. Սեղանին։*

*Ձեռնադրող սրբազանը «զաջն ի վերայ գլխոց նուիրելոցն» դնելով, կարդում է ձեռնադրության մեծ աղոթքը (էջ 15—17)։*

*Գեղեցիկ է այն պահը և սրտագրավ, երբ նորընծաները, ի նշան աշխարհքին հրաժարման, դառնալով «յարևմուտս», «զձեռս ի վեր ափ ի բաց» բարձրացնում են, մինչ կղերիկոսների խումբը, ուրախ և հանդիսավոր, երիցս երգում է «Աստուածային և երկնաւոր շնորհն» ձեռնադրության սքանչելի շարականը, ուր կոչում է արվում Ս. Հոգուն՝ իր աստվածային շնորհներով լցնելու նորընծաներին։*

*Ժողովուրդը միաբերան վկայում է՝ «Արժանի են»։*

*Ապա նորընծաները բոլորակի շարվում են ձեռնադրող սրբազանի աթոռի շուրջը, որը «զաջն ի վերայ գլխոցն» դնելով, յուրաքանչյուրին ասում է. «Ես դնեմ ձեռս ի վերայ սորա, դուք ամենքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան սարկաւագութեան անարատ պաշտել առաջի Սրբոյ Սեղանոյս Աստուծոյ»։*

*Սարկավագների ձեռնադրության հուզիչ արարողությունը վերջանում է ձեռնադրող սրբազանի «Պահպանիչ»-ով։*

*Ձեռնադրությունից անմիջապես հետո, «Ողջոյն»-ից առաջ, Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ և ձեռնադրող գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը խոսեց գեղեցիկ և բովանդակալից մի քարոզ հետևյալ բնաբանով. «Եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն և առցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ» (Մատթ. ԺԶ 24)։*

*Սարկավագների ձեռնադրությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը։*

*Սուրբ պատարագից հետո, վերատեսուչ սրբազանը նորընծա սարկավագներին առաջնորդեց Վեհարան՝ Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու պատգամը ստանալու համար։*

Ձեռնադրվող նորընծա սարկավագներն են.

Բարեշնորհ Անաստաս սարկավագ Մալախոյանը, ծնված 1937 թվականին Ազիզբեկովի շրջանի Բարձունք գյուղում (Հայաստան), Հոգևոր Ճեմարան է ընդունվել 1955—1956 ուսումնական տարում։

Բարեշնորհ Կարապետ սարկավագ Սուքիասյանը, ծնված 1936 թվականին Շավրավա քաղաքում (Իրան), Ճեմարան է ընդունվել 1956—1957 ուսումնական տարում։

Երեկոյան ժամը 5-ին, հանդիսավոր իրադրության մեջ, կատարվեց «Սրբոյն Ստեփաննոսի նախավկային և առաջին մարտիրոսին» նախատոնակը։

Մայր Աթոռի սարկավագները, ոգևորիչ խանդավառությամբ և ապրումով, երգեցին մեծ սրբին նվիրված «Օրհնութեան» և «Հարց»-ի շարականները։

Նախատոնակի հանդիսությանը նախագահում էր Մայր Տաճարի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը։



«ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԵՒ ԵՐԿՆԱՅԻՆ ՇՆՈՐՀ..., ԿՈՉԷ...»։

Բարեշնորհ Հակոբ սարկավագ Գյոկչյանը, ծնված 1938 թվականին Բեյրութում (Լիբանան), Հոգևոր Ճեմարան է ընդունվել 1956—1957 ուսումնական տարում։

Բարեշնորհ Արշավիր սարկավագ Շահարյանը, ծնված 1934 թվականին Դամասկոսում (Սիրիա), Հոգևոր Ճեմարան է ընդունվել 1958—1959 ուսումնական տարում։

Կիրակի, դեկտեմբերի 25-ին, կրկին Հոգևոր ուրախության օր էր Մայր Աթոռի միաբանության և Հոգևոր Ճեմարանի ուսանողության համար։

Երկուշաբթի, դեկտեմբերի 26-ի առավոտյան, Մայր Տաճարում ավանդական հանդիսությամբ կատարվեց ձեռնադրությունը։ Այսօր էլ սարկավագները ապրումով երգեցին բոլոր շարականներն ու մեղեդիները. Մայր Տաճարի խնկաբույր կամարների տակ, վեհ և հանդիսավոր, հնչեց «Այսօր դասք»-ը։

«Փառք ի բարձունս»-ի ժամանակ, Մայր Աթոռի տասնմեկ սարկավագները, սաղավարտ ի գլուխ, բուրվառ և տապանակ ի ձեռին, Իջման Ս. Սեղանի առաջ շարված, երգեցին «Փառք ի բարձունս»-ը, «Աստուած մեծ և հզօր» քարոզը, «Նախասարկաւագ և ա-

ռաջին մարտիրոս» «Մանկունք»-ը և «Ստեփանոս քաղցրիկ տատրակ» տաղը։

Հավարտ սուրբ ժամերգության, սարկավագները, Իջման Ս. Սեղանի առաջ, զույգ-զույգ խնկարկեցին Վեհափառ Հայրապետին և աջահամբույրով ստացան Նորին Ս. Օծության օրհնությունը։

Սուրբ պատարագը մատուցեց, Մայր Տաճարի հյուսիսային կողմի Ս. Ստեփանոսի անվան խորանի վրա, սարկավագների ժողովի կողմից ընտրված, փոխ լուսարարապետ Հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը։ Ս. Սեղանին սպասարկում էին Մայր Աթոռի բոլոր սարկավագները։

Սուրբ պատարագի Կոմիտասյան երգեցողությունը կատարեց Հոգևոր Ճեմարանի երգչախումբը։

Հավարտ սուրբ պատարագի, բոլոր սարկավագները երկյուղածությամբ հաղորդվեցին։

Այնուհետև, վերատեսուչ սրբազանը, լուսարարապետ սրբազանի հետ, սարկավագներին առաջնորդեց Վեհարան, որտեղ Նորին Ս. Օծությունը բարեհաճեց ընդունել բոլոր սարկավագներին, շնորհավորեց նրանց տոնը և բարեմաղթություններ արեց նրանց ապագա գործունեության համար, իրենց մտատիպար Ս. Ստեփանոս սարկավագի հավատով և արիությամբ։

Ժամը 3-ին, վանական սեղանատանը, տրվեց ճաշկերույթ ի պատիվ սարկավագների։

Մայր Աթոռի սարկավագների տոնը ջերմ, խանդավառ խոսքերով շնորհավորեցին գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Հայկազուն արքեպիսկոպոսները, Հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը, Ճեմարանի դասախոսներ Ա. Հատիտյանը և Պ. Շահբազյանը։



ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԸ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԻՆ

Հանուն սարկավագների, Գ լսարանի ուսանող բարեշնորհ Նորընծա Անաստաս սարկավագ Մովսիսյանը շնորհակալություն և երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին իրենց ձեռնադրության առթիվ և թարգմանը հանդիսացավ իր սարկավագ եղբայրների զգացմունքների ու խոհերի, և խոստացավ Աստուծո օգնականությամբ, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և դաստիարակչական կազմի ջանքերի շնորհիվ՝ արդարացնել իրենց վրա դրված հույսերը։

Սարկավագների պատվին տրված ճաշկերույթը վերջացավ խմբովին երգված Տերունական աղոթքով։

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԼ. ՍԱՀԻՆՅԱՆ

(Ճարտարապետական գիտությունների թեկնածու)

## ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ*

*Էջմիածնի Մայր Տաճարը քրիստոնեական վաղ շրջանի հնագույն կոթողներից մեկն է։ Այն ակընհայտի ցույց է տալիս հայկական արվեստի զարգացման հանգուցային մի քանի շրջաններ, հանդիսանում հայ ազգային ճարտարապետության կազմավորման ընթացքը պատկերող մի կենդանի պատմություն և դրանով իսկ բացառիկ տեղ գրավում Հայաստանի (և ոչ միայն Հայաստանի) ճարտարապետական-կառուցողական արվեստի պատմության մեջ։*

*Մայր Տաճարի կառուցվածքն իր վրա է բևեռել միջնադարյան հայ մատենագիրների (Ագաթանգեղոս, Փարպեցի, Սեբեոս, Դրասխանակերտցի, Օրբելյան, Դավրիժեցի և այլն), եվրոպական մասնագետների (Տեկտանդեր, Շարդեն, Տավերնիե և ուրիշներ), ինչպես և արվեստի ու մշակույթի հարցերով զբաղվող հայրենի և արտասահմանյան ժամանակակից հետազոտողների ուշադրությունը։*

*Տաճարը գտնվում է Հին Վաղարշապատում, որը հետագայում վերանվանվում է էջմիածին։*

*Ավանդությամբ՝ Մայր Տաճարի կառուցման վայրի ընտրությունը և կառուցումը տեղի է ունեցել երկնքից իջած Միածնի ցուցումով, որից և Տաճարի անունը՝ էջՍ Միածնին=էջմիածին։*

*Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքը, ըստ Ագաթանգեղոսի (Ե դ.) ստեղծվել է Տրդատ Գ թագավորի և Գրիգոր Լուսավորչի կողմից՝ քրիստոնեական կրոնը Հայաստանում պետական հռչակելու (279 կամ 301—303 թ. թ.) առաջին տարիներին[3]։*

*Կառուցումից մի քանի տասնամյակ անց, Սասանյան Պարսկաստանի թագավոր Շապուհ Բ-ի (309—379 թ. թ.) Հայաստանում կատարած ավերածությունների ընթացքում, Մայր Տաճարի կառուցվածքը ենթարկվում է լուրջ վնասվածքների։ Կարճ ժամանակամիջոցում՝ Ներսես (353—373 թ. թ.) և Սահակ (387—439 թ. թ.) կաթողիկոսների օրոք, ձեռնարկվում է մի քանի վերակառուցում, սակայն, երկրի քաղաքական և տնտեսական ծայր աստիճան լարված վիճակի պատճառով, հնարավոր չի լինում դրանք հասցնել ավարտի։*

*Ե դարի վերջերին Դվին և Վաղարշապատ քաղաքներում տարվող կառուցումների հետ մեկտեղ սկսվում է նաև Մայր Տաճարի վերակառուցումը։ Այդ աշխատանքների ժամա-*

[1] Զեկուցում՝ կարդացված Արևելագետների միջազգային 25-րդ կոնգրեսում, որը տեղի ունեցավ 1960 թվականի օգոստոսի 9—16-ը Մոսկվայում։ Զեկուցումը հրատարակվել է առանձին գրքույկներով՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով։

[3] Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, գլ. ԺԲ, էջ 375—384, գլ. ԺԴ, էջ 385—388, գլ. ԺՁ, էջ 391—392, գլ. ԺԷ, էջ 424—425.



ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

*նակակից Ե դարի պատմիչ Ղազար Փարպեցին հաղորդում է, որ այն «...Հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեացն իւրոց քաջ զօրավարն հայոց Մամիկոնեանն Վահան»[3] (ընդգծումը իմն է—Ալ. Ս.)։*

*Ճարտարապետ Թորամանյանը Փարպեցու այդ վկայությունից եզրակացնում է, թե Վահան Մամիկոնյանը «հին շենքը ամբողջովին քանդելով՝ հիմն ի վեր վերաշիներ է»[4]։ Պատմիչի վկայությունը նման ձևով են մեկնաբանել այդ հարցին անդրադարձած բոլոր մասնագետները։ Այդ եզրակացությունը հետևում է նաև Է դարի պատմիչ Սեբեոսի հաղորդումից[5]։*

*Նշանակում է, որ Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքը Ե դարի վերջերին մինչև հիմքերը քանդվել է և նրա տեղը ըստ էության կառուցվել մի նոր շենք։ Թե ի՞նչ ձև է ունեցել Տաճարի ինչպես սկզբնական, այնպես էլ Ե դարի վերջի կառուցվածքը, կամ ո՞ր ժամանակի գործ է այժմյան կանգուն շենքը, երկար ժամանակ վեճի առարկա է հանդիսացել։*

*Այդ հարցերի վրա որոշակի լույս են սփռում, Մայր Տաճարի վերակառուցման աշխատանքներին զուգընթաց, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի 1955, 1956 և 1959 թվականներին ձեռնարկած պեղումները։*

*Մայր Տաճարի այժմյան կառուցվածքի տակ բացվեցին մի առավել հնագույն շենքի մնացորդներ՝ գմբեթակիր մույթերի խարիսխների տակ, հնագույն շենքի անջատ կանգնած մույթերի խարիսխները, դրանց կից սկզբնական սալահատակի մի քանի սալեր, խարիսխների հիմքերի 2—3-ական շարքերը և Տաճարի գլխավոր (արևելյան) աբսիդի ներսում հնագույն աբսիդի ներքևի որմնաշարքերը։*

*Գմբեթակիր մույթերից յուրաքանչյուրի տակ դրված են միմյանցից տարբեր կառուցվածք ունեցող երկու տարբեր շենքերի խարիսխներ։*

*Վերևի խարիսխներից յուրաքանչյուրի երկու ճակատը, որոնք ուղղված են դեպի Տաճարի գմբեթակիր տարածությունը, ունեն մեծ լայնություններ (1,28—1,29 մ.), քան մյուս երկու ճակատները (0,89—0,97 մ.)։ Այսինքն՝ այդ խարիսխների համապատասխանող մույթերի այն ճակատներին, ուր փոխանցվում է գմբեթի ու գմբեթակիր կամարների ծանրությունը, տրվել է ավելի մեծ կտրվածք, քան այն ճակատներին, որոնք ազատ լինելով գմբեթի ու գմբեթակիր կամարների բեռից ստացել են միայն թաղակիր կամարների համեմատաբար նվազ ծանրության համապատասխան կտրվածք։*

*Խարիսխների բոլոր չորս ճակատներն էլ պրոֆիլներ ունեն։ Անկասկած, վերևի խարիսխները ստեղծվել են որպես գմբեթակիր շենքի խարիսխներ։*

*Ներքևի խարիսխների երեքական (արևելյան, արևմտյան, և դեպի Տաճարի կենտրոնական մասը ուղղված) ճակատների լայնությունները միմյանց հավասար են և ունեն բավականին մեծ չափեր, իսկ մեկական (դեպի հարավային և հյուսիսային պատերն ուղղված) ճակատներն զգալիորեն նեղանում են։*

*Հասկանալի է, որ ներքևի խարիսխների վրայից բարձրացող մույթերի այդ միմյանց հավասար երեք ճակատների համար էլ ի նկատի են ունեցվել միևնույն բնույթի, միմյանց հավասար կամարներ։ Այստեղ գմբեթակիր կամարներ, ուրեմն և գմբեթ չեն նախատեսվել։ Հետևապես, ներքևի խարիսխներին համապատասխանող մույթերից*

[3] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, դրվագ Գ, էջ 345—346։

[4] Թ. Թորամանյան, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», Երևան, 1948, Բ, էջ 61։

[5] Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Թիֆլիս, 1912, գլ. Ա, էջ 38։



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՆԵՐՍԻ ՏԵՍՔԸ 1958 ԹՎԱԿԱՆԻՆ

սկզբնավորվել են միայն թաղի ծանրությունը կրելու ընդունակ կամարներ։

Նման նշանակության մույթեր գոյություն ունեն քրիստոնեական վաղ շրջանի ինչպես հայկական (Քասաղ, Աշտարակ, Երերույք), այնպես էլ սիրիական (Ռուվեա), փոքրասիական (Բինբիր քիլիսե), վրացական (Բոլնիսի Սիոն) պաշտամունքի կառուցվածքներում։

Իսկ այդ հուշարձաններն հանդիսանում են, ինչպես հայտնի է, ոչ թե գմբեթակիր, կառուցվածքի։ Որոշակի տարբերություն գոյություն ունի նաև վերևի և ներքևի խարիսխների մշակման ոճի (պրոֆիլների) միջև։ Եթե ներքևի խարիսխները ունեն միևնույն (0,31—0,32 մ.) բարձրություններ և միանման պրոֆիլներ, ապա վերևի խարիսխները ունեն միևնույն բնույթի, բայց միմյանցից տարբեր պրոֆիլներ և նույնիսկ միմյանցից տարբեր (0,41—0,58 մ.) բարձրություններ։ Ընդ որում, ներքևի խարիսխների պրոֆիլները պարզ են, իրենց գծագրությամբ ավելի



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄՈՒՏՔԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՆԵՐՔԻՆ
ԽԱՐԻՍԽՆԵՐԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՃԱԿԱՏԸ

այլ թաղակապ ծածկով բազիլիկալ կառուցվածքներ։ Ակնհայտ է, որ Մայր Տաճարի գմբեթակիր մույթերի տակ գտնված ներքևի խարիսխները նույնպես պատկանել են, ոչ թե գմբեթակիր, այլ թաղակապ ծածկով բազիլիկալ կառուցվածքի։

Նշանակում է, վերևի խարիսխները պատկանել են գմբեթակիր, ներքևինը՝ բազիլիկալ արխաիկ և մոտենում են առնվազն Դ դարի կառուցվածքների (Քասաղի, Աշտարակի) խարիսխների մշակումների ոճին, իսկ վերևի խարիսխների պրոֆիլները հար և նման են Ե դարի վերջերին ստեղծված Բոլնիսի Սիոնի մույթերի, ինչպես և Քասաղի, Աշտարակի, Տեկորի տաճարներին հետագա (ամենայն հավանականությամբ Ե դարի) ավե-



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄՈՒՏՔԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԿՐԿՆԱԿԻ ԽԱՐԻՍԽՆԵՐԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԱԿԱՏԸ



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄՈՒՏՔԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԿՐԿՆԱԿԻ ԽԱՐԻՍԽՆԵՐԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՃԱԿԱՏԸ

լացրած մասերի խարիսխների պրոֆիլներին։

Պարզ երևում է, որ երբ կառուցվել են վերևի խարիսխները, ներքևի խարիսխները արդեն գոյություն են ունեցել։

Նշանակում է, երբ վերևի խարիսխները, հետևապես և նրանց համապատասխանող շենքը ցանկացել են կառուցել, հինը ամբողջությամբ քանդել են, թողնելով միայն անջատ կանգնած մույթերի այն խարիսխները, որոնց վրայից պետք է բարձրացվեին նոր շենքի գմբեթակիր մույթերը։ Փաստորեն, նոր շենքը կառուցողները, հինը հիմնովին, ինչպես պատմիչն է վկայում «հիմնարկեալ», հիմքից ի վեր վերաշինել են: Այսինքն տեղի պեցու հաղորդած՝ Ե դարի վերջերի վերակառուցման պատկերը։

Նշանակում է վերևի խարիսխները, հետևապես և նրանց համապատասխանող շենքն է, որ պետք է ստեղծված լինեն 480-ական թվականներին։

Արդ, հետաքրքրական է, թե ի՞նչ ձև է ունեցել այդ շենքը։

Ըստ ճարտարապետ Թորամանյանի ենթադրության, այն ունեցել է արտաքինից՝ ուղղանկյան տեսք, ներսից՝ խաչաձև դասավորված չորս աբսիդներ ու նրանց անկյուններում մեկական սենյակներ (ավանդատներ)։ Եվ, որ Է դարի կեսերին, Ներսես Գ կաթողիկոսը իբրև թե քանդել է բոլոր սեն-



ՄԱՑՐ ՏԱՃԱՐԻ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄՈՒՅԹԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԿՐԿՆԱԿԻ ԽԱՐԻՍԽՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

է ունեցել ճիշտ այնպիսի վերակառուցում, ինչի մասին հաղորդում է շինարարական այդ աշխատանքների ժամանակակից (հավանաբար և ականատես) Ե դարի պատմիչ Ղազար Փարպեցին, որը վերակառուցումից հետո հանդիսացել է այդ նույն տաճարի վանահայրը։

Ուրեմն, վերևի խարիսխները, ըստ ընդհանուր կառուցվածքի, պատկանել են գմբեթակիր շենքի, ըստ մշակման բնույթի (ոճի) համապատասխանում են Ե դարի համանման մանրամասների մշակումների բնույթին (ոճին), իսկ ներքևի խարիսխների նկատմամբ իրենց դրվածքով (կառուցվածքով) ճշտությամբ ներկայացնում Ղազար Փարյակներն ու աբսիդների արտաքին պատերը պատռելով դրսից կցել նոր՝ բազմանիստ աբսիդներ և ստացել այժմյան թե՛ դրսից և թե՛ ներսից խաչաձև կառուցվածքը[6]։

Պեղումների նյութերը ցույց են տալիս, որ 480-ական թվականներին վերակառուցված շենքը ունեցել է այլ ձև և նրա հատակագծային կոմպոզիցիան հետագայում փոփոխության չի ենթարկվել։

Ինչպես տեսանք, 480-ական թվականներին ստեղծված խարիսխների չորս ճակատներն էլ պրոֆիլներ ունեն։ Եթե շենքը ունե-

6 Այդ ենթադրության դեմ առարկել են Ն. Մառը, ինչպես և Ն. Տոկարսկին և ուրիշները։

նաև Թորամանյանի ենթադրած տեսքը, ապա այդ խարիսխների չորս ճակատներից երկու-ական պետք է գտնվեին աբսիդների ու նրանց կից սենյակների միացման հանգույց-ների պատերի մեջ թաղված։

Բնական է, նման բան չէր կարող արվել. ինչո՞ւ պետք է գմբեթակիր մույթերի բոլոր խարիսխների չորս ճակատները մեծ ջանա-սիրությամբ մշակվեին և անմիջապես նրանց յուրաքանչյուրի երկուական ճակատները թաղվեին հանդիպակաց պատերի մեջ։

սիդներով և անկյունային սենյակներով կոմ-պոզիցիայի հնարավորությունը։

Տաճարի 1955 թվականի վերակառուցման աշխատանքների ժամանակ, երբ հանվեցին այժմյան գմբեթակիր մույթերի և նրանցից սկզբնավորվող կամարների ծեփերը, պարզ-վեց, որ բացի 480-ական թվականների գործ հանդիսացող հիշյալ խարիսխներից, պահ-պանվել են նաև այդ խարիսխներին համա-պատասխանող մույթերը, մույթերի իմ-պոստներից մի քանիսը և գմբեթակիր բոլոր



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱԲՍԻԴԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԽԱՐԻՍԽՆԵՐԸ

Հասկանալի է, որ մենք այստեղ գործ ու-նենք անջատ կանգնած մույթերի խարիսխ-ների հետ, որոնք ժամանակին չորս կողմից դիտվել են։

Նշանակում է՝ դրանց դիմաց պատեր, հե-տևապես և անկյունային սենյակներ չեն ե-ղել։ Իսկ այդ ամենը անհնարին է դարձնում ուղղանկյուն ձևի մեջ ներգծված չորս ար-

կամարները։ Այսինքն, պահպանվել է Ե դարի շենքի կոմպոզիցիոն գլխավոր առանցքը կազմող գմբեթակիր ողջ կառուցվածքը, բա-ցառությամբ գմբեթի։

Ըստ Սեբեոսի (Է դարի պատմիչ) և Դրաս-խանակերտցու (Ժ դարի պատմիչ) Մայր Տաճարը Է դարի սկզբներին ունեցել է փայ-

տաշեն գմբեթ, որը Կոմիտաս կաթողիկոսը փոխարինել է քարով[7]։

Դժվար է ստույգ ասել, փայտաշեն գմբեթը պատկանել է Ե դարի շենքի՞ն, թե՞ Ե դարում շենքը ունեցել է քարաշեն գմբեթ, իսկ հետագայում ինչ-որ ավերումից հետո, ժամանակավոր կառուցվել է փայտից։ Այժմյան գմբեթը ավելի ուշ (թերևս ԺԷ դ.) վերակառուցման արգասիք է։ Մի բան կասկածից վեր է, որ Ե դարի գմբեթակիր մույթերը և նրանցից սկզբնավորվող կամարները ստեղծվել են քարե գմբեթի համար և ամբողջ շենքը հանդիսացել է քարաշեն։

Այդ քարաշեն կառուցվածքի ամբողջական պատկերը վերարտադրելու նպատակով շինարարական համեմատական վերլուծություն կատարվեց մի կողմից՝ Ե դարի գըմբեթակիր մույթերի և նրանցից սկզբնավորվող կամարների, մյուս կողմից՝ Տաճարի այժմյան արտաքին պատերի, նրանց կից աբսիդների, ավանդատների կառուցվածքների և նրանց մանրամասների միջև։

Պարզվում է, որ Տաճարի թե՛ արտաքին պատերի որմնամույթերի ու Ե դարի գմբեթակիր մույթերի համապատասխան ճակատների միանման չափերը։ Թե՛ միմյանց նկատմամբ նրանց ճիշտ դասավորությունը, թե՛ նրանց խարիսխների մշակման միևնույն բնույթը (ոճը) և թե՛ արտաքին պատերի վրա դեռևս պահպանված Դ—Ե դարերի ճարտարապետական մանրամասների (հնագույն ճակատնի քիվի) մնացորդները ցույց են տալիս, որ Տաճարի արտաքին պատերի սկզբնական կառուցվածքներն ու նրանցից ելնող որմնամույթերը ժամանակակից են Ե դարի գմբեթակիր մույթերին ու նրանց մանրամասներին (խարիսխներ, իմպոստներ)։



ՔԱՍԱՂԻ ԲԱԶԻԼԻԿԱՅԻ ԱԲՍԻԴԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԻ ՆԵՐՔԵՎԻ ՇԱՐՔԸ

Թե՛ արտաքին պատերի ու նրանցից ելնող աբսիդների կառուցվածքի օրգանական միասնությունը, թե՛ այդ պատերի և աբսիդների մանրամասների (խարիսխների) մշակման ընդհանրությունը և թե՛ աբսիդների առջևով՝ արտաքին պատերի ուղղությամբ ընթացող պատերի կամ հիմքերի բացակայությունը, աներկբայորեն ցույց են տալիս, որ Տաճարի արտաքին պատերը և նրանցից դուրս ելնող այժմյան բազմանիստ աբսիդները կազմում են միաժամանակ ստեղծված մի միասնական կառուցվածք։ Իսկ Ե դարի

7 Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Թիֆլիս, 1913, գլ. ԻԵ, էջ 141—142։— Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 74—75։

զմբեթակիր մույթերի և արտաքին պատերի. Հետևապես վերջինների հետ ամբողջություն կազմող աբսիդների միասնությունը ցույց է տալիս, որ շենքը ամբողջությամբ հանդիսանում է Ե դարի վերջերին ստեղծված մի միասնական կառուցվածք:

խաչաձև կառուցվածքը, ոչ թե ստեղծվել է Ներսես Գ կաթողիկոսի ժամանակ՝ Է դարի կեսերին, այլ նրանից գրեթե երկու դար առաջ՝ 480-ական թվականներին:

Հետևապես, դեռևս Ե դարում, Հայաստանում արդեն իսկ ստեղծվել էր խաչաձև կենտ-



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱԲՍԻԴԻ ԽԱՐԻՍԽԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԾԱԿԱՏԸ

Տաճարի հետ օրգանական միասնություն են կազմում նաև արևելյան աբսիդին կից ավանդատները:

Նշանակում է, էջմիածնի Մայր Տաճարի այժմյան ինչպես ներսից, այնպես էլ դրսից

րոնագմբեթ կառուցվածքի մոնումենտալ կերպարը[5].

[5] Դրանով հաստատվում է Ն. Մառի տեսակետը, թե «Հայկական եկեղեցիների հնագույն տիպը ունեցել է խաչի ձև, առանց ներկառուցային հավելումների»:

եթե վերևի խարիսխները և նրանց համապատասխան շենքը հանդիսանում են Վահան Մամիկոնյանի 480-ական թվականների կառուցածը, ապա, ինքնին հասկանալի է, որ նրա տակ պահպանված առավել հնագույն նախնիացնա ոչ այլ ինչ էր, եթե ոչ էջմիածնի Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքը։

Հին շենքի մնացորդները (աբսիդը, սեղանը և չորս խարիսխները) անշուշտ պահպանվել են կրոնական նկատառումներով։



ՏԵԿՈՐԻ ԲԱԶԻԼԻԿԱՅԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍՅՈՒՆԱՍՐԱՀԻՑ ՄԻ ՀԱՏՎԱԾ

կառուցվածքի մնացորդները պատկանել են այն շենքին, որը, նոր շենքը կառուցելու ժամանակ, Վահան Մամիկոնյանը մինչև հիմքերը քանդեց իբրև զհնացեալ գործ նախնեացն իւրոց։ Իսկ այդ «հնացեալ գործ

Հայ ժողովրդի համար, էջմիածնի Մայր Տաճարը, որպես աստվածային կամքով ստեղծված կառուցվածք, դարեր շարունակ հանդիսացել է ամենանվիրական սրբավայրը. այդ երևույթը պետք է առավել ջերմե-

ռանդ ձևով դրսևորված լինեբ նրա կառուցման առաջին դարերում։

Ե—Զ դարերում Հայաստանում, ինչպես և քրիստոնեական կրոնը ընդունած մյուս երկրներում, սկսվել էր քրիստոնեական պաշտամունքի կառուցվածքների առավել լայն շինարարություն։ Տաճարաշինությունը ազատվում էր քրիստոնեական պաշտամունքի սկզբնական շրջանում ստեղծված պարզ կոմպոզիցիայից ավելի բարդի անցման շրջան։ Նոր ժամանակները առաջադրել էին նոր մտահղացումների՝ ճարտարապետական նոր խղճանքների ու ձևերի ստեղծման անհրաժեշտություն։ Նախկին ընդերկայնական պարզ կառուցվածքները, աստիճանաբար ստանալով զանազան հավելումներ, ընդունել էին առավել բարդ հորինվածք։ Առանձին կառուցվածքների վրա դրվում է գմբեթ (Հայաստանում՝ Տեկոր (Ե դ.), Վրաստանում Ծղարոս-Թավլի (Ե—Զ դ. դ.) և այլն)։

Աստիճանաբար աճում է կենտրոնագմբեթ կառուցվածք ունեցող տաճարի կերպարի ստեղծման գաղափարը։ Եվ ահա, իբրև այդ ամենի օրինական հետևանք, Ե դարի վերջին քառորդում, Էջմիածնի Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքի տեղում, ստեղծվում է քրիստոնեական պաշտամունքի կառուցվածքի մի նոր տիպ՝ խաչաձև կենտրոնագմբեթ կառուցվածքը։

Կենտրոնագմբեթ կառուցվածքի հատակագիծն ունենալով ընդերկայնական տիպի կառուցվածքի համեմատությամբ տարբեր հորինվածք, չէր կարող ամբողջությամբ դրվել Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքի հիմքերի վրա, և բնականաբար ստեղծվել են նոր շենքի հատակագծին համապատասխան նոր հիմքեր։

Սակայն, նոր շինարարության ժամանակ չէին կարող միանգամայն անտարբեր գտնըվել դեպի «Աստուծո կամքով» և «Լուսավորչի ձեռքով» հիմնադրված Տաճարի կառուցվածքը։ Մի կողմից՝ հին ասիդը ներառնելով նորի մեջ, պահպանել են քրիստոնեական տաճարների Սրբություն Սրբոց համարվող գըլխավոր սեղանը ու նրա կենտրոնից բարձրացող վեմը (կամ առնվազն նոր վեմի համար պահովել հին վեմի տեղը), մյուս կողմից՝ նոր Տաճարի ամենաէական մասը հանդիսացող գմբեթը բարձրացրել են հին սրբավայրի «Լուսավորչաշեն» խարիսխների վրա։

Այսպիսով, քանի որ հնագույն շենքի մնացորդները պատկանում են Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքին, իսկ նրա խարիսխները (հետևապես և նրանց վրայից բարձրացած անշատ կանգնած մույթերը) պատկանել են թաղակապ ծածկով բազիլական շենքի (որպիսի կառուցվածքին համապատասխանում են նաև հնագույն ասիդի



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ
ԸՍՏ Թ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ

մնացորդները), ապա Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքը նույնպես նույն ժամանակաշրջանի քրիստոնեական պաշտամունքի անդրանիկ տաճարների նման (Քասաղ, Աշտարակ և այլն) ունեցել է թաղակապ ծածկով բազիլիկալ կառուցվածք։ Եվ բնական է, որ Էջմիածնի Մայր Տաճարը չէր կարող ըստ էության ունենալ մի բոլորովին այլ կոմպոզիցիա, քան նույն ժամանակաշրջանի Հայաստանի մյուս անդրանիկ տաճարները։

Թ. Թորամանյանը, ելնելով դրանից, գրել է. «Լուսավորչաշեն կաթուղիկեի համար չի կարելի ենթադրել ուրիշ մի ձև, քան Քասաղի, Տեկորի, Աշտարակի և այլ նմանների հատակագծային ձևերը»[9]։ Նման ենթադրություն արել են նաև հայկական ճարտարապետության այլ մասնագետներ[10]։

Արդ, տեսնենք ի՞նչ կոնկրետ տեսք է ունեցել այդ կառուցվածքը։

Դժբախտաբար ամբողջ պարագծով հիմքերը չեն պահպանվել, որպեսզի անմիջա-

---

9 Թ. Թորամանյան, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», Երևան, 1942, Ա, էջ 311։

10 Ն. Մ. Տոկարսկի, «Հին Հայաստանի ճարտարապետությունը», Երևան, 1946, էջ 58—62 (ռուսերեն)։

պես վերարտադրվեր հատակագծի պատկերը։ Հին շենքի հիմքերը կառուցված են եղել սովորական պատի նման սրբատաշ քարից։ Եվ քանի որ Մայր Տաճարի նոր հատակագիծը չի համընկել հնի հետ, հին շենքի պատերը քանդելիս, քանդել և հավաքել են նաև հիմքերի շինաքարը։

Սակայն հիմնվելով Հայաստանի քրիստոնեական վաղ շրջանի համանման հուշարձանների կառուցողական սկզբունքի վրա, հնարավոր է լրացնել հին շենքից պակասող մասերը և լիովին վերարտադրել նրա թե՛ հատակագծային և թե՛ տարածական-ծավալային կոմպոզիցիան։

Կառուցողական այդ սկզբունքի հիմքում ընկած է մոդուլային համակարգը, իսկ յուրաքանչյուր շենքի մոդուլը հանդիսացել է տվյալ կառուցվածքի հիմնական կրող մասը հանդիսացող մույթը (մույթի ընդերկայնական չափը)։

Բոլոր նման հուշարձաններում (Քասաղ, Եղվարդ, Աշտարակ, Երերույք, Տեկոր և այլն), չնայած նրանց հիմնական համանման չափումները բացարձակ թվերով միմյանցից տարբերվում են, սակայն նրանք ունեն նույն «մոդուլ»-ով արտահայտված հաստատուն համաչափություններ[11]։ Այսպես.



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ Ե ԴԱՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

[11] Ալ. Սահինյան, «Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը», Երևան, 1955, էջ 174։



ՀՆԱԳՈՒՅՆ ՔԻՎԻ ԲԵԿՈՐ ԳՏՆՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱԲՍԻԴԻ ՀԻՄՔԵՐԻ ՄՈՏԻՑ



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱԲՍԻԴԻ ՀԱՏԱԿԸ

ա. Գրեթե բոլոր հուշարձաններում արտաքին պատերի հաստությունը հավասար է 0,75 մոդուլի։

բ. Փոքր նավերի լայնությունները հավասար են մեկ մոդուլի։

գ. Գլխավոր նավերի կամարաշարքերի արևմտյան որմնամույթը և պատերը միասին հավասար են մեկ մոդուլի։



ՔԱՍԱՂԻ ԲԱԶԻԼԻԿԱՅԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱԿԱՏԻ ՃԱԿՏՈՆԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ

դ. Մույթերի ընդերկայնական չափը հավասար է մեկ մոդուլի։

ե. Գլխավոր նավերի կամարաշարքերի հորիզոնական բացվածքները հավասար են 2—3 մոդուլի։

զ. Գլխավոր նավերի կամարակիր մույթերի բարձրությունը հավասար է 2—3 մոդուլի։

է. Գլխավոր նավերի թաղակիր կամարների մույթերի բարձրությունը հավասար է 4—5 մոդուլի։

ը. Տաճարի եռանավ մասի ներսի բարձրությունը հավասար է 6—7 մոդուլի։

թ. Տաճարի արտաքին բարձրությունը հավասար է 6,5—7,8 մոդուլի[12]։

Նշանակում է, եթե հայտնի լինի մույթի ընդերկայնական չափը, կարելի է առանց որևէ բացարձակ չափերի վերարտադրել շենքի ողջ կոմպոզիցիան իր մանրամասներով։

Բարեբախտաբար հայտնի է Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքի ու միայն մույ-

12 Ալ. Սահինյան, «Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը», էջ 174—175։



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱԲՍԻԴԻ Ե ԴԱՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԲԱՑՎԱԾ ԱՌԱՎԵԼ ՀՆԱԳՈՒՅՆ ԱԲՍԻԴԻ ԱՆԿՅՈՒՆԸ



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱԲՍԻԴԻ Ե ԴԱՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԲԱՑՎԱԾ ԱՌԱՎԵԼ ՀՆԱԳՈՒՅՆ ԱԲՍԻԴԻ ՈՒՆԱՅՈՐԴՆԵՐԸ. ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԿՐԱԿԱՐԱՆ

թի ընդերկայնական չափը, այլև Տաճարի սկզբնական կառուցվածքից պահպանված մնացորդները կազմում են գլխավոր նավի մի հիմնական սեկցիան։ Այսինքն՝ պահպանվել են իրենց սկզբնական տեղերում գլխավոր նավի կամարակիր չորս մույթերի խարիսխները, որոնք ցույց են տալիս թե՛ այդ խարիսխներից բարձրացող մույթերի և թե՛ այդ մույթերից սկզբնավորվող կամարների թռիչքների չափերը։



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ Դ ԴԱՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Իսկ որ առավել հետաքրքրական է, այդ սեկցիայի հիմքում ընկած է նույն մույթային համակարգը։ Ավելին, այդ սեկցիան և ժամանակի տեսակետից Մայր Տաճարին ավելի մոտ՝ Քասաղի տաճարի համապատասխան սեկցիան, չնայած իրենց տարբեր բացարձակ չափերին, ունեն ճիշտ նույն համաչափությունները։

Ունենալով միայն փոքր նավի լայնության չափը և համանման տաճարների հատակա-

գծերի համաչափությունը (որը մեծ մասամբ հավասար է 1:2-ի), այդ սեկցիայի մեխանիկական կրկնումով կարելի է ստանալ Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքի



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ Դ ԴԱՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԸՆԴԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ Դ ԴԱՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԸՆԴԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

հատակագծի ներքին տարածության պատկերը։

Հեշտությամբ վերարտադրվում է նաև Տաճարի տարածական-ծավալային ներսի կառուցվածքը։

Ամենայն հավանականությամբ Տաճարի ծածկը ունեցել է ոչ թե արևմտյան համանման կառուցվածքների նման բազիլիկ կտրվածք, այլ երեք նավերն էլ առնվել են մեկ ընդհանուր կտուրի տակ, այսինքն պատկանել է բազիլիկ կառուցվածքների արևելյան տիպին։ Նման ծածկ ունի նաև Քասաղի բազիլիկան, որի հետ, ինչպես տեսանք, սերտ կերպով առնչվում են Մայր



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱԲՍԻԴԻ Ե ԴԱՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԲԱՑՎԱԾ ԱՌԱՎԵԼ ՀՆԱԳՈՒՅՆ ԱԲՍԻԴԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԸ



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱԲՍԻԴԻ ԲԵՄԻ ՏԱԿ ԳՏՆՎԱԾ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿՈԹՈՂ

Տաճարի սկզբնական կառուցվածքի մնացորդների համաչափությունները։

Տարածական-ծավալային կառուցվածքի վերարտադրման համար բավական է ունենալ միայն անշարժ կանգնած մույթի բարձ-

Ընդունելով մույթերի բարձրությունը 3 մոդուլ, տանում ենք նրանց վրայից ժամանակին բնորոշ՝ պայտաձև կամարներ և ստանում գլխավոր նավի կամարաշարքը, իսկ վերջինից սկզբնավորելով թաղակիր



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱԲՍԻԴԻ ԲԵՄԻ ՏԱԿ ԳՏՆՎԱԾ
ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿՈԹՈՂԸ ԿԱՆԳՆՎԱԾ ՏԱՃԱՐԻ ՇՐՋԱՓԱԿԻ ՀՅՈՒՍԻՍԱԿՈՂՄԸ

րությունը (որը ինչպես Քասաղում, այնպես էլ Աշտարակում, անգամ գմբեթակիր կառուցվածքներ՝ Օձունում և Գայանեում հավասար է 3 մոդուլի)։

կամարներն ու թաղը, ստանում գլխավոր նավի կառուցվածքը։ Այնուհետև նույն ժամանակաշրջանի նույնատիպ կառուցվածքների ճակատների գրաֆիկական կառուցման

միջոցով որոշելով ընդհանուր ծածկի թեքությունը, պարզում ենք փոքր նավերի բարձրությունները և դրանով ամբողջացնում Տաճարի նաև տարածական-ծավալային կառուցվածքի պատկերը։

Հետևապես, լիովին վերարտադրվում է Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքի ինչպես հատակագծային, այնպես էլ տարածական-ծավալային ողջ կոմպոզիցիան։

Եվ այսպես, Մայր Տաճարի 1955, 1956 և 1959 թվականների պեղումներից ստացված նյութերի ուսումնասիրությունից հետևում է.

1. Մայր Տաճարի այժմյան խաչաձև կենտրոնագմբեթ կառուցվածքը ստեղծվել է ոչ թե Է դարի կեսերին, այլ գրեթե երկու դար առաջ՝ 480-ական թվականներին։

2. Հայկական դասական ճարտարապետության մեջ խաչաձև կենտրոնագմբեթ կառուցվածքի սկզբնական ձևը, ոչ թե արտաքինից՝ ուղղանկյուն, ներսից՝ խաչաձև կոմպոզիցիան է, այլ թե՛ դրսից և թե՛ ներսից խաչաձև կառուցվածք ունեցող կոմպոզիցիան։ Այդ տեսակետից, Մայր Տաճարի Ե դարի ձևը, իբրև ճարտարապետական ավարտուն կերպար, որոշակի ճշտումներ է մտցնում Հայաստանի քրիստոնեական վաղ շրջանի խաչաձև կենտրոնագմբեթ կառուցվածքների տիպերի առաջացման և նրանց դասակարգման մեջ։

3. Մայր Տաճարի Ե դարի շենքի տակ պահպանվել են Տաճարի սկզբնական կառուցվածքի մնացորդները, որոնք պատկանել են թաղակապ ծածկով բազիլիկալ կառուցվածքի։ Այդ շենքն է, որ, ըստ Ագաթանգեղոսի, կառուցվել է քրիստոնեական կրոնը Հայաստանում պետական հռչակելու (279 կամ 301—303 թ. թ.) առաջին տարիներին։

4. Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքի մնացորդները ցույց են տալիս, որ այն ստեղծվել է Հայաստանի քրիստոնեական վաղ շրջանի բազիլիկալ կառուցվածքներում բացահայտված մոդուլային սիստեմի հիման վրա։ Այդ մնացորդները, նույն ժամանակաշրջանի նույնատիպ հուշարձանների համաչափությունների հիման վրա մասնակիորեն լրացնելով, վերարտադրվում է Տաճարի սկզբնական կառուցվածքի ինչպես հատակագծային, այնպես էլ տարածական-ծավալային ներքին կառուցվածքի ամբողջական պատկերը։

5. Ճարտարապետական-շինարարական նյութերը լիովին վավերացնում են էջմիածնի Մայր Տաճարի վերաբերյալ, ինչպես Ագաթանգեղոսի, այնպես էլ Ղազար Փարպեցու վկայությունների իսկությունը։

6. Տաճարի Ե դարի կառուցվածքի հիմքերի հորիզոնի վրա, բացվեցին բարձր արվեստով կատարված խոշոր ծավալի խճանկարի մնացորդներ։

Խճանկարը ստեղծվել է Դ դարի կեսերից մինչև Ե դարի կեսերն ընկած ժամանակաշրջանում և 480-ական թվականներին գտնըվել է արդեն ավերված վիճակում,

7. Տաճարի արևելյան աբսիդի Ե դարի կառուցվածքի մեջ ներառված հնագույն աբսիդի կենտրոնում՝ թաղված վիճակում բացվեցին Դ—Ե դարերի որմանկարչության մնացորդներ (ավերված վիճակում), ինչպես որմանկարի, այնպես էլ խճանկարի մնացորդները պատկանել են Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքին։

8. Տաճարի գլխավոր աբսիդի Ե դարի կառուցվածքի մեջ ներառված հնագույն աբսիդի կենտրոնական մասում՝ վեմքարի պատվանդանի տակ բացվեց կրակարան (կարասի մեջ առնված թոնիր, ակը ուղղըված դեպի արևմուտք)։

Վեմքարի կառուցումը հենց կրակարանի վրա, ակնհայտ կերպով հանդիսանում է հեթանոսական պաշտամունքի նկատմամբ քրիստոնեական կրոնի տարած հաղթանակի սիմվոլացումը։

9. Տաճարի գլխավոր աբսիդի Ե դարի բեմի ներքևի շարվածքի մեջ, հայտնաբերվեց հղկված որձաքարից պատրաստված ուրարտական ժամանակաշրջանին պատկանող 3,10×0,73×0,53 մ. չափի կոթող, որը վկայում է էջմիածնի շրջապատում, դեռևս ուրարտական ժամանակաշրջանից, գոյություն ունեցող մշակութային կյանքի կենտրոնի առկայությունը։

Այսպիսով, պեղումների նյութերը ոչ միայն լույս են սփռում էջմիածնի Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքի ու նրա հետագա կրած ձևափոխությունների լուսաբանման վրա, այլև խոշոր նշանակություն ունեն քրիստոնեական վաղ շրջանի ճարտարապետական, կառուցողական և մոնումենտալ արվեստի կազմավորման մի շարք էական հարցերի ճշմարտացի ըմբռնման համար։